

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐ

Պայմանագիր՝ «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» 220կՎ օդային գծի բոլոր հինգ հատվածների համար ՎԳՊ-ի իրականացման վերաբերյալ համապատասխանության հաշվետվության պատրաստում», թիվ. HV-CS-3/2014

Պատվիրատու՝ «ԲԱՐՁՐԱՎՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ

Պատրաստված է՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ կողմից

Ամսաթիվ՝ Սեպտեմբերի 3, 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ամփոփագիր	4
II. Ներածություն	5
Ծրագրի ընդհանուր նկարագիրը	5
ՎԳՊ նպատակները և շրջանակը	6
Իրավական շրջանակ և իրավասություններ	7
Մոնիտորինգ և գնահատում	8
III. ԱՄ մեթոդաբանությունը	10
IV. ՎԳՊ իրականացման ընթացակարգերը	12
Ինստիտուցիոնալ կառուցվածք և կառավարում	12
Հանրային քննարկումներ և իրազեկում	13
Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ	14
Վճարումների գործընթաց	16
Հարկադիր օտարում և ձեռնարկված միջոցներ	16
V. Ազդեցության իրական շրջանակի որոշումը	18
VI. Փոխհատուցման համապատասխանության գնահատումը	23
Փոխհատուցումը հողի մշտական կորստի դիմաց	23
Փոխհատուցումը մշակաբույսերի դիմաց	25
Փոխհատուցումը սոցիալապես խոցելի խմբերի համար	25
Փոխհատուցումը «խիստ ազդեցության» համար	26
VIII. ՎԳՊ իրականացման բյուջեի ամփոփումը	27
IX. Հանրային գոհունակությունը	28
X. Եզրակացություններ և առաջարկություններ	30
Առաջարկություններ և քաղված դասեր	31
XI. Հավելվածներ	32
Հավելված Ա. Ազդեցության ենթակա հողերը և փոխհատուցումը	32
Հավելված Բ. Բողոքների գրանցման աղյուսակ (անգլերենով)	37
Հավելված Գ. Արտաքին մոնիտորինգի արդյունքում առաջարկված ճշգրտող միջոցառումների ցանկ	41
Հավելված Դ. Վճարումների գործընթացում առկա շեղումները ՎԳՊ դրույթներից	43

Օգտագործված հապավումներ

ԱԳ	Անվտանգության գոտի
ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձ
ԱՏՏ	Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն
ԱՄ	Արտաքին մոնիտորինգ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲԷՑ	Բարձրավիճակ էլեկտրական ցանցեր ՓԲԸ
ԲԿՄ	Բողոքների կարգավորման մեխանիզմ
ԲԿՀ	Բողոքների կարգավորման հանձնաժողով
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԳՔ	ՀԲ-ի գործառնական քաղաքականության
ԴՊ	Դժվարանում եմ պատասխանել
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՔ	Հանրային քննարկում
ՀՔՀՊ	Հանրային քննարկման և հրապարակման պլան
ՎԳՊ	Վերաբնակեցման գործողության պլան
ՎՔՇ	Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ
ՏՁՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՏ	Տնային տնտեսություն
ՕԳ	Օդային գիծ

I. Ամփոփագիր

- Սույն «Համապատասխանության հաշվետվությունը» մշակվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագրի «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» էլեկտրահաղորդման օղային գծի անվտանգության գոտու ՎԳՊ իրականացման արտաքին մոնիտորինգի արդյունքում:
- Հաշվետվությունն անդրադառնում է Ծրագրի անվտանգության գոտու հողակտորներում ՎԳՊ իրականացման արդյունքների համապատասխանությանը:
- Անվտանգության գոտում Ծրագիրն ազդել է 10 գյուղական համայնքների 167,574մ2 ընդհանուր մակերեսով 189 բնակավայրային նշանակության մասնավոր հողակտորների 198 ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների վրա: ԱՏՏ-ներից 54-ը խոցելի են և 45-ը խիստ ազդեցության ենթարկված: Հողի, մշակաբույսերի, խիստ ազդեցության և սոցիալապես խոցելի լինելու դիմաց փոխհատուցումները համապատասխանում են ՎԳՊ դրույթներին: Շենքերի, շինությունների օտարման, բիզնեսի և զբաղվածության կորստի, ծառերի կորստի, ինչպես նաև ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր չեն եղել:
- Արտաքին մոնիտորինգի կողմից համապատասխանության ուսումնասիրություններն ընդգրկել են ՎԳՊ իրականացման գործընթացները, ազդեցության շրջանակի որոշումը, տրամադրված փոխհատուցման և ԱՏՏ-ների գոհունակության գնահատումները:
- Բացահայտվել են որոշ անճշտություններ, որոնց համար ներկայացվել են ճշգրտող միջոցառումների առաջարկներ: 2020 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ առաջարկված բոլոր ճշգրտող միջոցառումները կատարված են: ՎԳՊ իրականացումը համարվում է ամբողջությամբ ավարտված և կարելի է մեկնարկել շինարարական աշխատանքները:

Արտաքին մոնիտորինգի արդյունքները հավաստում են, որ Անվտանգության գոտում ՎԳՊ իրականացման միջոցառումներն ու գործընթացները համապատասխանում են սահմանված դրույթներին:

Առկա են հարկադիր օտարման 2 դեպքեր, որոնք գտնվում են դատական քննության ընթացքում, և այդ մասով ՎԳՊ իրականացումը համարվում է պայմանականորեն իրականացված՝ մինչև Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի համապատասխան վճիռը:

Արձանագրվել են որոշ ընթացակարգային խախտումներ, որոնք չեն հանգեցրել ՎԳՊ իրականացման էական շեղումների և չեն խոչընդոտել փոխհատուցման ծրագրի արդյունավետ ավարտմանը:

Առաջարկված ճշգրտող միջոցառումները կատարվել են: ՎԳՊ իրականացումն ավարտվել է ԱՏՏ-ների ընդհանուր գոհունակության պայմաններում:

II. Ներածություն

Ծրագրի ընդհանուր նկարագիրը

«Էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԲԷՑ) իրականացնում է Հայաստանի 4 մարզերի վարչական տարածքով անցնող շուրջ 230 կմ երկարությամբ «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» էլեկտրահաղորդման օդային գծի (այսուհետ՝ նաև ՕԳ) վերանորոգում: Դա իրականացվում է ցանցի հուսալիությունը բարձրացնելու, գծի թողունակությունը ավելացնելու և Հայաստանում էներգամատակարարման բացը լրացնելու նպատակով: Ծրագիրը ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային միջոցներով:

Ծրագիրը նախատեսում է ամբողջովին վերափոխել Հրազդանի ՋԷԿ-ից մինչև Շինուհայրի ենթակայան ձգվող բարձրավոլտ գիծը, մոնտաժել նոր հենասյուներ, փոխարինել և նորացնել էլեկտրահաղորդման լարերը, մեկուսիչները և այլ առանցքային ենթակառուցվածքները:

Նոր ՕԳ-ն ամբողջությամբ չի գտնվելու գոյություն ունեցող ՕԳ-ի անվտանգության գոտու սահմաններում, ուստի հողակտորների և հողօգտագործման վրա մշտական ազդեցության դեպքերում առաջանում է հողի ձեռքբերման անհրաժեշտություն: Հողի ձեռքբերումը պահանջվում է հենարանների հիմքերի շինարարության համար: Այն դեպքերում, երբ նոր ՕԳ անվտանգության գոտում հայտնվեն տներ և չբավարարվեն անվտանգ հեռավորության նվազագույն պահանջները, կառաջանա նաև վերաբնակեցման անհրաժեշտություն: Միաժամանակ, հողի ձեռքբերման կամ հողի նպատակային նշանակությունը բնակավայրայինից գյուղատնտեսականի փոփոխման անհրաժեշտություն է առաջանում բոլոր այն դեպքերում, երբ բնակավայրային նշանակություն ունեցող հողակտորը գտնվում է ՕԳ անվտանգության գոտում:

Ծրագիրն իրականացվում է 5 առանձին ենթահատվածներով: Յուրաքանչյուր ենթահատվածի համար պետք է մշակվի և իրականացվի Վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ)՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ՀԲ-ի Գործառնական քաղաքականության 4.12 ձեռնարկի (այսուհետ՝ ՀԲ ԳՔ ձեռնարկ): Ստորև աղյուսակում ներկայացվում են Ծրագրի իրականացման համար առանձնացված 5 ենթահատվածները:

Աղյուսակ 1. Ծրագրի ենթահատվածները

Ենթահատված	Երկարություն
Ենթահատված 1. Նորադուզ (Հրազդանի ՋԷԿ – Կամո)	45 կմ
Ենթահատված 2. Լիճք (Կամո – Լիճք)	25 կմ
Ենթահատված 3. Վարդենիս (Լիճք – Եղեգնաձոր)	45 կմ
Ենթահատված 4. Վայք (Եղեգնաձոր – Սպանդարյան ՀԷԿ)	70 կմ
Ենթահատված 5. Որոտան 1 (Սպանդարյան ՀԷԿ – Շինուհայր)	40 կմ

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ

ՕԳ անվտանգության գոտու սահմաններում հայտնված բնակավայրային նշանակության հողակտորների համար մշակվել և իրականացվել առանձին ՎԳՊ: ՕԳ անվտանգության գոտում գտնվող բնակավայրային նշանակության հողակտորներ առկա են միայն 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթահատվածներում:

ՎԳՊ նպատակները և շրջանակը

ՎԳՊ-ի հիմնական նպատակը Ծրագրի ազդեցությանը ենթարկված անձանց հայտնաբերելն ու աջակցելն է՝ նրանց կյանքի որակը և կենսակերպը վերականգնելու և առնվազն մինչ-Ծրագրային մակարդակ հասցնելու համար:

Քանի որ անվտանգության գոտում Ծրագրի իրականացման արդյունքում ֆիզիկական վերաբնակեցման ենթակա ԱՏՏ-ներ չկան, Ծրագրի ազդեցությունն անվտանգության գոտում համարվում է փոքր¹: Ըստ այդմ մշակվել է համառոտ ՎԳՊ:

Ծրագրի անվտանգության գոտու համար համապատասխան ՎԳՊ-ն հաստատվել է 2016 թվականի հունվարին, ապա վերանայվել՝ 2017 թվականի սեպտեմբերին և 2018 թվականի հունվարին: Վերջինիս հայերեն և անգլերեն տարբերակները հասանելի են ԲԷՑ-ի ինտերնետային կայքում (<http://hven.am/իրագրվումներ/>):

Հաստատված ՎԳՊ-ն ներառում է հողի, շենքի/շինության, մշակաբույսերի և ծառերի, եկամուտների, բիզնեսի և աշխատատեղի մշտական կամ ժամանակավոր կորստի դեպքերում ազդեցության ենթարկված անձանց (այսուհետ՝ նաև ԱԵԱ) իրավունքների շրջանակը, ինչպես նաև Ծրագրի խիստ ազդեցության, ֆիզիկական վերաբնակեցման և խոցելիության նպաստների մասին համապատասխան դրույթները:

Ազդեցության ենթարկված ակտիվների 100 տոկոս գույքագրման արդյունքում ՎԳՊ-ով որոշվել են փոխհատուցման ենթակա ակտիվների և եկամտի կորստի տեսակները և չափերը:

Ծրագրի ազդեցությունը ճշգրիտ կերպով գնահատելու համար իրականացվում են հետևյալ ուսումնասիրությունները.

1. Չափագրման ուսումնասիրություն, ըստ որի չափվել են ազդեցության ենթարկված հողային տարածքները, ինչպես նաև վնասված գույքի քանակն ու տեսակը,
2. Կորուստների գույքագրում, ըստ որի որոշվել և գնահատվել են հողերի և ձեռքբերման ենթակա գույքի բնութագրերը,
3. Վնասված գույքի փոխհատուցման արժեքի գնահատում, ըստ որի որոշվել է կորցրած գույքի, եկամտի, կենսամակարդակի այլ աղբյուրների և ծախսերի փոխհատուցման գումարը,
4. Մարդահամարի անցկացում, ըստ որի որոշվել է ազդակիր տնային տնտեսությունների և նրանց անդամների ճշգրիտ քանակը՝ ներառելով որոշ սոցիալական բնութագրեր (սեռ, էթնիկ պատկանելիություն, կրթություն, կենսամակարդակ և եկամտի աղբյուրներ):

Այսպիսով, վերաբնակեցումը, փոխհատուցումը և բարեկեցության վերականգնումը պետք է իրականացվի համաձայն հաստատված ՎԳՊ-ի: ՎԳՊ-ն ներկայացնում է ազդեցության ենթակա անձանց նկարագիրը, կորուստների և ազդեցությունների չափը, փոխհատուցման և վերականգնման քաղաքականության շրջանակը, ՎԳՊ իրականացման ինստիտուցիոնալ և գործառնական մեխանիզմները, ՎԳՊ իրականացման ժամանակացույցը և բյուջեն, տեղեկատվության հրապարակման, հանրային քննարկումների և բողոքների կարգավորման մեխանիզմները և այլն:

ՎԳՊ իրականացումը սկսվել է 2016 թվականի հունիսին: Սույն հաշվետվությունը վերաբերում է Ծրագրի անվտանգության գոտու հողերի ՎԳՊ իրականացման արտաքին մոնիտորինգի արդյունքներին (տե՛ս Հավելված Ա):

¹ Համաձայն ՀԲ Գործառնական քաղաքականությունների (Operation Manual 4.12, Revised April 2013) ազդեցությունը համարվում է փոքր, եթե ազդակիր անձինք ֆիզիկապես չեն վերաբնակեցվում, չեն կրում արտադրողական ակտիվների ավելի քան 10 տոկոսի կորուստ, կամ ֆիզիկապես վերաբնակեցվում են 200-ից պակաս ազդակիր անձինք:

Իրավական շրջանակ և իրավասություններ

Վերաբնակեցման պլանավորման և իրականացման իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է և դրանից բխող համապատասխան ՀՀ օրենսդրական ակտերը: Քանի որ Ծրագիրն իրականացվում է միջազգային պայմանագրի շրջանակներում և ՀԲ-ի ռեսուրսներով, ուստի Ծրագրի իրականացման իրավական շրջանակը ներառում է նաև ՀԲ-ի կողմից պարտադրված վերաբնակեցման քաղաքականության դրույթները:

ՀՀ-ում սեփականության ոչ կամավոր օտարումը (հասարակության ու պետության կարիքների համար) հնարավոր է միայն օրենքով սահմանված կարգով բացառիկ՝ գերակա հանրային շահի դեպքում: Օտարման հիմքերը, փոխհատուցման կարգը և այլ համապատասխան դրույթներ սահմանվում են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, այն տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին սեփականության իրավունքով պատկանող սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների վրա:

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:

ՀՀ օրենսդրության և ՀԲ-ի քաղաքականության միջև առկա են որոշակի տարբերություններ: Մասնավորապես, ՀԲ ԳՔ 4.12 ձեռնարկը նախատեսում է փոխհատուցում և վերաբնակեցման աջակցություն նույնիսկ հողի սեփականության իրավունքի բացակայության պայմաններում: Բոլոր այն դեպքերում, երբ ՀԲ ԳՔ 4.12 ձեռնարկի պահանջներն ավելի խիստ են քան ՀՀ օրենսդրության պահանջները, պետք է կիրառվեն ԳՔ 4.12 ձեռնարկի պահանջները:

Այսպիսով, Ծրագրի ազդեցության արդյունքում փոխհատուցման ենթակա են.

- 1) հողի կորուստ ունեցող անձինք, որոնք հանդիսանում են հողի սեփականատեր, օրինականացման ենթակա անձ, վարձակալ կամ ապօրինի օգտագործող,
- 2) հողի վրա գտնվող շենքի/շինության, մշակաբույսերի, ծառերի և այլ օբյեկտների սեփականատերերը,
- 3) բիզնես եկամուտներ կամ աշխատավարձ ժամանակավոր կամ մշտապես կորցնողները:

Փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է կասեցման ամսաթվով, որը մարդահամարի և մանրամասն չափագրման հետազոտության սկսվելու օրն է: Ծրագրի անվտանգության գոտու 2-րդ և 3-րդ ենթահատվածների հողակտորների համար վերջնաժամկետը 2014 թվականի հոկտեմբերի 13-ն է, իսկ անվտանգության գոտու 4-րդ ենթահատվածի հողակտորների համար՝ 2015 թվականի մարտի 10-ը: Վերանայված ՎԳՊ-ով Ձորագյուղ և Ծակքար համայնքների հողերի համար վերջնաժամկետը սահմանվել է 2017 թվականի ապրիլի 1-ը, իսկ Գետափ համայնքի հողերի համար՝ 2017 թվականի հուլիսի 20-ը:

Անվտանգության գոտու ՎԳՊ-ն ներառում է միայն մասնավոր սեփականություն հանդիսացող և առանց պետական գրանցման բնակավայրային նշանակության հողեր: Հաշվի առնելով այս առանձնահատկությունը՝ հողերի դիմաց փոխհատուցման ենթակա են միայն բնակավայրային հողերի օրինական կամ օրինականացման ենթակա սեփականատերերը՝ օրինականացումից հետո²:

² Անվտանգության գոտու ՎԳՊ-ն չի ներառում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողեր, ինչպես նաև՝ ոչ

Անվտանգության գոտու բնակավայրային նշանակություն ունեցող հողերի փոխհատուցման և վերականգնման համար տրամադրվող դրամական աջակցության հաշվարկը պետք է կատարվի աղյուսակ 2-ում ներկայացված տարբերակներից մեկով՝ ԱԵԱ-ների ընտրությամբ:

Աղյուսակ 2. Հողերի դիմաց դրամական փոխհատուցման հաշվարկը

Տարբերակ	Հաշվարկ
Տարբերակ 1. Հողի ձեռքբերում	Հողի շուկայական կամ կադաստրային արժեքներից առավել բարձրը + 15%
Տարբերակ 2. Հողի (ամբողջական) նպատակային նշանակությունը բնակավայրայինից գյուղատնտեսականի փոփոխում	Հողի արժեզրկման մեծություն

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ

Բացի այդ, հողի 10 տոկոս և ավել կորուստ կրած ԱՏՏ-ները պետք է ստանան «խիստ ազդեցության» նպաստ:

Ի լրումն վերը նշված դեպքերի՝ նախատեսվում են նաև խոցելիության համար լրացուցիչ վերականգնողական միջոցառումներ: Մասնավորապես, ՎԳՊ-ով նախատեսվում է խոցելի տնային տնտեսություններին³ 6 ամիս շարունակ լրացուցիչ վերականգնողական դրամական աջակցության տրամադրում՝ ամսական 50,000 ՀՀ դրամ:

Դրամական աջակցություն է նախատեսվում նաև ՎԳՊ-ի իրականացման հետ կապված փաստաթղթերի վճարների փոխհատուցման համար: Մասնավորապես, ԱԵԱ-ները կստանան ֆինանսական աջակցություն լիազորագրի, անձնագրի նորացման (եթե ժամկետը լրացել է), ժառանգության ճանաչման, հողի ձեռքբերման գործարքների (ներառյալ հարկեր) ծախսերը հատուցելու համար. վճարները կկատարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մի մաս:

Մոնիտորինգ և գնահատում

ՎԳՊ-ի իրականացումը ենթակա է և՛ ներքին, և՛ արտաքին մոնիտորինգի: Ներքին մոնիտորինգը իրականացվում է ՎԳՊ իրականացնող միավորի կողմից:

Արտաքին մոնիտորինգն իրականացվում է անկախ խորհրդատուի կողմից: Այն ենթադրում է համապատասխանության ուսումնասիրությունների իրականացում և դրա հիման վրա յուրաքանչյուր ՎԳՊ-ի համար «Համապատասխանության հաշվետվության» մշակում և ներկայացում:

Արտաքին մոնիտորինգի նպատակն է հավաստիանալ, որ փոխհատուցման ծրագիրն իրականացվել է Վերաբնակեցման քաղաքականության շրջանակի (ՎԲՇ), ՀԲ-ի ԳՔ 4.12 ձեռնարկի և ՎԳՊ դրույթներին համապատասխան, ըստ անհրաժեշտության՝ առաջ քաշել ճշգրտող միջոցառումներ ու առաջարկություններ:

օրինական օգտագործող կամ վարձակալ ԱԵԱ-ներ:

³ Ըստ ՎԲՇ-ի՝ խոցելի են համարվում հետևյալ ազդակիր տնային տնտեսությունները. (i) Անապահով ՏՏ, որոնք գրանցված են Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ, (ii) Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի այլ աշխատունակ տարիքի անձ չկա, (iii) Թոշակառուներից, տարեցներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի այլ աշխատունակ տարիքի անձ չկա:

Ծրագրի արտաքին մոնիտորինգն իրականացնում է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը» (այսուհետ՝ ՏՀՀԿ), որը հանրային ծրագրերի մոնիտորինգի և գնահատման աշխատանքներում մասնագիտացված անկախ հետազոտական կառույց է⁴:

Արտաքին մոնիտորինգի ուսումնասիրությունները ներառել են քանակական և որակական հետազոտության տարբեր մեթոդներ: Իրականացվել են դաշտային և գրասենյակային ուսումնասիրություններ: Սույն հաշվետվության հաջորդ բաժնում բերվում են արտաքին մոնիտորինգի մեթոդաբանության մանրամասները, իսկ հաջորդող բաժիններում ներկայացվում են արտաքին մոնիտորինգի արդյունքները և հիմնական եզրակացությունները:

ՏՀՀԿ կողմից արդեն իսկ իրականացվել է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթահատվածների ՎԳՊ իրականացման արտաքին մոնիտորինգային ուսումնասիրությունները և դրանցից յուրաքանչյուրի համար պատրաստվել են առանձին Համապատասխանության հաշվետվություններ:

Սույն հաշվետվությունում ներկայացվում են անվտանգության գոտու ՎԳՊ իրականացման արտաքին մոնիտորինգի արդյունքները:

⁴ Կենտրոնի մասին մանրամասների համար տես՝ www.EDRC.am

III. ԱՄ մեթոդաբանությունը

Արտաքին մոնիտորինգի (այսուհետ՝ նաև ԱՄ) շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների մեթոդաբանության ընտրության և իրականացման համար հիմք են ծառայել ներկայացված տեխնիկական առաջադրանքը, ՎԳՊ դրույթները և համաձայնեցված տեխնիկական առաջարկը: Համապատասխանության ուսումնասիրությունը ներառել է քանակական և որակական հետազոտության խառը մեթոդներ: Իրականացվել են գրասենյակային և դաշտային ուսումնասիրություններ:

Տվյալների հավաքման համար կիրառվել են մասնավորապես 3 հիմնական մեթոդներ.

- Տվյալների բազաների վերլուծություն և փաստաթղթերի քննություն,
- Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
- ԱՏ-ների հետ հարցազրույցներ:

Գրասենյակային ուսումնասիրությունների ընթացքում ՏՁՀԿ աշխատանքային խումբը հավաքագրել և համադրել է անհրաժեշտ տեղեկատվությունը, ուսումնասիրել, քննել է ֆինանսական և ոչ ֆինանսական ծրագրային փաստաթղթերը (ներառյալ՝ ՎՔՇ, ՀԲ-ի ԳՔ 4.12 ձեռնարկ, ՎԳՊ), վերլուծվել են առկա տվյալների բազաները:

Մասնավորապես, հիմնական ուսումնասիրության առարկա են դարձել հետևյալ փաստաթղթերը.

- **Նկարագրության արձանագրությունները**, որոնք ներառում են ազդեցության ենթարկված ակտիվների նկարագրությունը, այն է՝ հողակտորների, մշակաբույսերի, ծառերի, շենք-շինությունների և այլ անշարժ գույքի, բիզնեսի նկարագրությունը:
- **Գնահատման հաշվետվությունները**, որտեղ արտոնագրված գնահատողների կողմից ներկայացվում են օտարման ենթակա ակտիվների գնահատման արդյունքները:
- **Վերականգնման օժանդակությունների չափի որոշման հաշվետվությունները**, որտեղ արտոնագրված գնահատողների կողմից ներկայացվում են Ծրագրի խիստ ազդեցության ենթարկված, սոցիալապես խոցելի անձանց/ԱՏՏ-ներին տրամադրվող վերականգնման օժանդակությունների հաշվարկը:
- **Սեփականության օտարման մասին պայմանագրերը**, որտեղ նշվում են օտարվող հողակտորի ծածկագիրը, մակերեսը, փոխհատուցման և օժանդակության ենթակա կորտի տեսակը, փոխհատուցման և օժանդակության չափը, ստացողը՝ սեփականատերը (վարձակալը, չձևակերպված օգտագործողը), բանկային հաշվեհամարը և այլն:
- **Ազդակիր անձանց լրացուցիչ փոխհատուցման մասին համաձայնագրերը**, որտեղ նշվում են փոխհատուցման հիմքերը, չափը և այլն:
- **Վճարման հանձնարարագրերը**, որտեղ նշվում են փոխհատուցման նպատակը, ամսաթիվը, գումարի չափը, ստացողի տվյալները:
- **Ներքին մոնիտորինգի հաշվետվությունները**. ԲԷՑ-ի կողմից տրամադրվել են 11 հաշվետվություններ:

Վերլուծվել են առկա տվյալների բազաները և համեմատվել ծրագրային մյուս փաստաթղթերում ազդեցության և ազդակիրների վերաբերյալ տեղեկատվության հետ:

Բոլոր պայմանագրերի, համաձայնագրերի և վճարումը հավաստող փաստաթղթերի առկայության հետ մեկտեղ, ստուգվել է դրանցում նշված տեղեկատվության համադրելիությունը և համապատասխանությունը, մասնավորապես (1) բոլոր սեփականատերերի ստորագրության առկայությունը, (2) հողի դիմաց փոխհատուցման և լրացուցիչ փոխհատուցման համապատասխանությունը, (3) բանկային հաշվեհամարների համապատասխանությունը, (4) փաստաթղթերի վավերականացման (գործողությունների իրականացման) ամսաթվերի համապատասխանությունը գործող կարգին (իրականացման ժամանակացույցին):

Ուսումնասիրությունները ներառել են նաև հանրային քննարկումների և խորհրդատվության, բողոքարկման, ինստիտուցիոնալ կազմակերպման, փոխհատուցման հաշվարկման և վճարման գործընթացները:

Մոնիտորինգի ընթացքում հարցազրույցներ են իրականացվել հիմնական իրազեկ անձանց հետ, որոնք ներառել են Ծրագրի հիմնական աշխատակիցներին, պաշտոնյաներին և խորհրդատուներին, ՏԻՄ ներկայացուցիչներին, ինչպես նաև տարածաշրջանում գործող ՀԿ-ներին:

Նախօրոք մշակված հարցաթերթի հիման վրա, կազմակերպված կերպով, անվտանգության գոտու հողակտորների ազդակիր տնային տնտեսություններից 69 տոկոսի հետ իրականացվել են հարցազրույցներ, արդյունքները մուտքագրվել են տվյալների բազա և վերլուծվել:

Տարբեր աղբյուրներից ստացված տվյալները և տեղեկատվությունը վերլուծվել ու համադրվել են, որը թույլ է տվել գնահատել գործընթացը, հավաստիանալ և փոխստուգել փոխհատուցման ստացման փաստը, ինչպես նաև բացահայտել առկա խնդիրները և բացերը:

Կիրառված մեթոդաբանությունը և ստացված ԱՄ արդյունքները թույլ են տվել եզրակացնել տվյալների հավաստիության, տեղեկատվության ամբողջականության և ճշգրտության վերաբերյալ, ինչպես նաև փոխհատուցման ծավալների համապատասխանության և գործընթացի արդյունավետության մասին:

Մշակվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ: Մոնիտորինգի արդյունքները արտահայտված են սույն Համապատասխանության հաշվետվությունում:

IV. ՎԳՊ իրականացման ընթացակարգերը

Ինստիտուցիոնալ կառուցվածք և կառավարում

Ծրագրի ինստիտուցիոնալ շրջանակը ներառում է մի շարք կազմակերպություններ և կառույցներ, որոնց դերակատարումը և պատասխանատվության շրջանակը մանրամասն ներկայացված են ՎԳՊ-ում: ԲԷՑ-ը Ծրագրի իրականացման անմիջական պատասխանատուն է, որն ունի մի շարք խորհրդատուներ.

- Շինարար կապալառու (Kalpataru Power Transmission Limited) պատասխանատու է ՎԳՊ-ի կազմման համար՝ ներառյալ չափագրումները, նկարագրման արձանագրությունների կազմումը, հանրային քննարկումների կազմակերպումը և տեղեկատվության հրապարակումը, ծրագրի և հենարանների տեղակայման վայրի որոշումը:
- ՎԳՊ իրականացմանն աջակցող խորհրդատու (Hifab OY & Energy Advisory) պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության համար և պետք է երաշխավորի դրանց համապատասխանությունը Ծրագրի հաստատված ծրագրին, սոցիալական և բնապահպանական պահանջներին, որի համար հաշվետվություններ է ներկայացնելու շինարարության ամբողջ ընթացքում:
- Արտաքին մոնիտորինգի իրականացման անկախ խորհրդատու (EDRC) պատասխանատու է ՎԳՊ իրականացման արտաքին մոնիտորինգի և Համապատասխանության հաշվետվության ներկայացման համար:

ՎԳՊ-ով նախատեսվում է, որ ԲԷՑ-ում պետք է կազմավորվի 5 մասնագետից բաղկացած հատուկ խումբ՝ Իրականացնող միավոր⁵: Այն պատասխանատու է վերաբնակեցման իրականացման և ներքին մոնիտորինգի համար, երաշխավորում է ԱԵԱ-ների արագ և պատշաճ ծանուցումը, պայմանագրերի ստորագրման գործընթացի կազմակերպումը և ԱԵԱ-ներին աջակցությունը, հարկադիր օտարման գործընթացի կազմակերպումը, ԱԵԱ-ների գույքի գրանցումն ու վերագրանցումը, բողոքների գրանցումը և համակարգումը:

Այնուհանդերձ, իրականացման փուլում որոշվել է Իրականացման միավորի որոշ գործառույթներ պատվիրակել արտաքին խորհրդատուներին: Մասնավոր հողակտորների ձեռքբերման աշխատանքներն իրականացվել են «Կապիտալ Գեո» ՍՊԸ-ի և «Վ.Նիկոլոսյան» ԱԶ-ի կողմից:

ԱԵԱ մարդահամարը, ազդեցության ենթարկված սեփականության գույքագրումն ու Գնահատման հաշվետվությունների պատրաստումն իրականացրել է «Ֆինափ» ՍՊԸ-ն:

Ծրագրի ինստիտուցիոնալ շրջանակը ներառում է նաև ՀՀ պետական մարմինները (համապատասխան նախարարություններ, մարզպետարաններ և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե), ՏԻՄ-երը, Բողոքների կարգավորման հանձնաժողովը, տարածաշրջանում գործող ՀԿ-ները, նաև Համաշխարհային բանկը:

Հիմնական բացահայտումներ

ՎԳՊ իրականացման կառավարման համակարգում տեղի են ունեցել փոփոխություններ: Մասնավորապես, ԲԷՑ-ը իր միջոցներով վարձակալել է մասնագիտացված կազմակերպություններ՝ հողերի ձեռքբերման պրոցեսին օժանդակելու համար: Դա համաձայնեցվել է ՀԲ-ի հետ: Ինստիտուցիոնալ կառուցվածքը և կառավարումը համապատասխանում են ՎԳՊ դրույթներին:

⁵ ՎԳՊ իրականացնող միավորը պետք է ունենա հետևյալ կազմը՝ խմբի ղեկավար, վերաբնակեցման 2 մասնագետ (անմիջապես դաշտում աշխատող), իրավաբան (ոչ լրիվ զբաղվածությամբ) և 2 մասնագետ (գրասենյակում աշխատող):

Հանրային քննարկումներ և իրազեկում

Վերաբնակեցման գործողությունների պլանավորմանը, իրականացմանը և մոնիտորինգին ակտիվ մասնակցություն պետք է ունենան ԱԵԱ-ները: Այդ նպատակով կազմվել է Հանրային քննարկման և հրապարակման պլանը (ՀՔՀՊ), որի հիման վրա ԲԷՑ-ը Կապալառուի միջոցով իրականացնում է լայնածավալ հանրային քննարկումներ՝ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների միջոցով: Այս քննարկումներին իրենց մասնակցությունը կարող են ունենալ նաև ազդակիր համայնքների ՏԻՄ ներկայացուցիչները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները:

2014 թվականի օգոստոսին մշակվել է ՀՔՀՊ, որի նպատակն է հիմնել հանրային քննարկումների և տեղեկատվության տարածման գործուն ընթացակարգեր, մեխանիզմներ և սկզբունքներ: Հանրային քննարկումների (այսուհետ նաև՝ ՀՔ) և ԱԵԱ-ների իրազեկման պաշտոնական գործընթացը սկսվել է նախքան ՎԳՊ իրականացումը: Հանրային քննարկումները կազմակերպվել են 2014 թվականի հոկտեմբերի 13-ից 2015 թվականի ապրիլի 29-ը: Պայմանավորված նախնական ՎԳՊ վերանայմամբ՝ 2017 թվականի ապրիլի 1-ից հուլիսի 20-ը հանրային քննարկումներ են կազմակերպվել Ձորագյուղ, Ծակքար և Գետափ համայնքներում:

Հանրային քննարկումներն անցկացվել են համայնքների ՏԻՄ գրասենյակներում: Բոլոր ԱՏՏ-ները նախօրոք տեղեկացվել են ՀՔ իրականացման տեղի և ժամի վերաբերյալ: ՀՔ-ների թեմաներն ընդգրկել են ՎԳՊ մշակման, իրականացման և փոխհատուցման հարցերը՝ ներառյալ Նախնական ուսումնասիրությունների սկզբի մասին ՀՀ կառավարության որոշումը⁶, ինչպես նաև Մանրամասն չափագրման հետազոտության իրականացումը:

ՀՔ-ներին մասնակցել են Ծրագիրն իրականացնող կազմակերպության, նախագծող և գնահատող խորհրդատուների ներակայացուցիչները, սոցիալական և վերաբնակեցման հարցերով մասնագետներ: ԱԵԱ-ներին տրամադրվել են ԲԷՑ-ի և Խորհրդատուի կոնտակտային տվյալները՝ լրացուցիչ հարցերի և խորհրդատվության համար:

Ոչ պաշտոնական հանրային քննարկումներ ԱԵԱ-ների և ՏԻՄ-երի հետ իրականացվել են չափագրման, գույքագրման և մարդահամարի անցկացումից առաջ և ընթացքում: ՎԳՊ իրականացման ընթացքում ոչ պաշտոնական քննարկումները շարունակվել են հատկապես պայմանագրերի ստորագրման շրջանում: Մասնավորապես, իրականացվել է խորհրդատվություն ԱԵԱ բարձրացված հարցադրումների և հնարավոր խնդիրների շուրջ: ԱԵԱ-ներին իրավաբանական և կազմակերպչական հարցերում տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն: Մասնավորապես, մահացած սեփականատերերի դեպքում կարգավորվել է ժառանգության իրավունքի վերականգնման գործընթացը: Սեփականատիրոջ երկրից բացակայելու դեպքերում կարգավորվել է լիազորագրի տրամադրման գործընթացը: ՏՀՀԿ-ն չունի այս դեպքերի և համապատասխան ԱՏՏ-ների ճշգրիտ քանակը: Այս տեղեկատվությունը չի արձանագրվել իրականացնող կազմակերպության կողմից:

Տեղեկատվության տարածման շրջանակներում իրականացված գործողություններն են. (1) ՀՀ օրենքով նախատեսված ծանուցումների տրամադրումը ԱԵԱ-ներին (նկարագրության արձանագրություն, պայմանագրի նախագիծ), (2) հանրային տեղեկատվական գրքույկի տրամադրումը, (3) ՎՔՀ հրապարակումը, (4) ՎԳՊ նախագծի և վերջնական ՎԳՊ հրապարակումը: Նկարագրության

⁶ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում «Հասարակության և պետության կարիքների համար օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության մասին» ՀՀ կառավարության N599-Ն որոշում, առ 12 հունիսի 2014թ.:

արձանագրությունը ԱԵՏ-ներին առաքվել է փոստով, իսկ ինֆորմացիոն գրքույկները բաժանվել են հանրային իրազեկման միջոցառումների ժամանակ:

ՎԳՊ-ում հիշատակվում են Վայոց Ձորի մասնաճյուղ «Հայաստանի Կանաչների Միություն» ՀԿ, «Տարածաշրջանային Զարգացման Կենտրոն» ՀԿ, «Կանանց Տարածաշրջանային Ասոցիացիա» ՀԿ, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ, ինչպես նաև Գավառի և Գորիսի Օրիուս կենտրոնները՝ որպես տարածաշրջանում ակտիվ գործող կազմակերպություններ: Արտաքին մոնիտորինգի արդյունքներով, նշվածներից երեքն են տեղեկացված եղել հանրային քննարկումների մասին (Գավառի և Գորիսի Օրիուս կենտրոններ և «Տարածաշրջանային Զարգացման Կենտրոն» ՀԿ), սակայն որևէ կերպ մասնակից չեն դարձել գործընթացին:

«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ն, ինչպես նաև տարածաշրջանում գործող այլ ակտիվ ՀԿ-ներից «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն նշել են, որ հետաքրքրված են ծրագրով և հրավերի դեպքում կմասնակցեին ծրագրի միջոցառումներին:

Հիմնական բացահայտումներ

Թեև իրականացված գործընթացները համապատասխանում են ՎԳՊ դրույթներին, սակայն ՀԿ-ների դերը և մասնակցությունը շարունակում է փոքր մնալ: Արտաքին մոնիտորինգն այս խնդիրն արձանագրել է նաև նախորդ գնահատումների ընթացքում: ՀԿ-ների մասնակցության ընդլայնման նպատակով Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը պետք էր տարածել առավել մեծ թվով ՀԿ-ների շրջանում, մասնավորապես, պետք էր հետևողական լինել, որպեսզի ապահովվեր հետաքրքրված ՀԿ-ների մասնակցությունը:

Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ

ՎԳՊ-ի իրականացմանը վերաբերվող տարածայնությունների և բողոքների արդյունավետ և արագ լուծման նպատակով մշակվել է Բողոքարկման մեխանիզմ (ԲՄ), որը ներկայացվել է հանրային քննարկումների ընթացքում: Այն ներկայացված է նաև Ծրագրի տեղեկատվական գրքույկում:

Բողոքարկման մեխանիզմը ներառում է 3 փուլ: Սկզբնական փուլում փորձ է արվում բողոքները լուծել համայնքի մակարդակով: Դիմում-բողոքները ընդունում է տվյալ համայնքում լիազորված անձը և փոխանցում ԲԷՑ-ի բողոքարկման համակարգողին: ԱԵԱ-ը կարող է նաև անձամբ դիմել ԲԷՑ-ի բողոքարկման համակարգողին, որի կոնտակտային տվյալները տրամադրվել են ՀԲ ժամանակ⁷: Բողոքի պատասխանը ներկայացվում է առավելագույնը 15 օրվա ընթացքում:

Եթե բողոքը շարունակվում է, ապա դիմում-բողոքը ներկայացվում և քննարկվում է Բողոքների կարգավորման հանձնաժողովում, որում ընդգրկված են նաև մարզի և, կամ համայնքի ներկայացուցիչներ և ՀԿ-ներ: Բողոքների կարգավորման երկրորդ փուլի ծախսերն ընդգրկվում են ԱԵԱ-ը դիմում է դատարան:

Սոցիալապես խոցելի ԱԵԱ-ները, ըստ պահանջի, կարող են աջակցություն ստանալ նաև սոցիալական աշխատողի կամ իրավաբանի կողմից: Այնուհանդերձ նման որևէ դիմում չի եղել՝ դրանք արձանագրված չեն Ներքին մոնիտորինգի հաշվետվությունների մեջ⁸:

⁷ Բողոքարկման համակարգողի տվյալները նշված են Ծրագրի տեղեկատվական գրքույկում:

⁸ ՎԳՊ ներքին մոնիտորինգի և ԲՄԱԳ համապատասխանության համար պատասխանատուն՝ ՎԳՊ իրականացմանն աջակցող և շինարարական աշխատանքները վերահսկող խորհրդատուն է:

Անվտանգության գոտում ՎԳՊ իրականացման արդյունքներով ստացվել են 64 գրավոր բողոքներ և 17 հարցադրումներ:

Գրավոր բողոքներից 61-ը վերաբերել են սեփականատերերի ցանկությանը օտարել հողի տնտեսական և գործառնական նշանակությունը կորցրած մնացած հատվածը: Բողոքները քննվել են ԲԷՑ-ում, բավարարվել է բողոքներից 55-ը:

1 բողոք բավարարվել է մասնակի: ԱԵԱ-ն ցանկացել է օտարել հողի մնացած ամբողջ հատվածը, սակայն ԲԷՑ-ը համաձայնվել է օտարել հողի միայն այն հատվածը, որը կորցրել է իր տնտեսական և գործառնական նշանակությունը (1 հողակտոր, Վերին Գետաշեն համայնք, լուս-կող 05-087-0206-0001):

5 բողոքներ չեն բավարարվել: Չբավարարված բողոքներից 3-ի դեպքում ԲԷՑ-ը և հողերի սեփականատերերը եկել են համաձայնության այն հարցի շուրջ, որ հողերի մնացած հատվածները չեն կորցրել իրենց տնտեսական և գործառնական նշանակությունը և հետևաբար օտարվել են հողերի միայն ազդեցության ենթարկված հատվածները: Մյուս 2 բողոքների դեպքում հողերի սեփականատերերը հրաժարվել են ստորագրել պայմանագրերը: Գործերը ներկայացվել են Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրին դատական վճիռ տալու նպատակով (2 հողակտոր, Վերին Գետաշեն համայնք, լուս-կողեր՝ 09-084-0003-0051 և 05-087-0202-0211):

Գրավոր բողոքներից 3-ը վերաբերել են սեփականատերերի ցանկությանը չօտարելու հողերը և ստանալու հողերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրայինից գյուղատնտեսականի փոփոխելու հետևանքով առաջացած արժեզրկման չափը: Բողոքները քննվել են ԲԷՑ-ում և բավարարվել են:

ԲԷՑ-ի կողմից ՏՀՀ-ին տրամադրվել է միայն 3 բողոքների գրավոր պատասխաններ, որոնց դեպքում խախտվել է բողոքարկման մեխանիզմի ընթացակարգը: Մասնավորապես, գրավոր պատասխանները չեն ներկայացվել 15 օրվա ընթացքում:

Մնացած բողոքների լուծման արդյունքների մասին ՏՀՀ-ն դատում է միայն վճարման հանձնարարագրերի մեջ փոխհատուցման համապատասխան փոփոխությունից և տվյալների բազայում ազդեցության մակերեսների փոփոխությունից: Այս բողոքների դեպքում հնարավոր չէ գնահատել նաև բողոքների լուծման մեխանիզմի աշխատանքը, մասնավորապես, քանի օրվա ընթացքում է ներկայացվել գրավոր պատասխանը ԱԵԱ-ին:

17 հարցադրումներից 8-ը վերաբերել են սեփականատերերի ցանկությանը օտարել հողի տնտեսական և գործառնական նշանակությունը կորցրած մնացած հատվածը: Թեև այս դեպքերում սեփականատերերը իրենց դիմումները պետք է ներկայացնեին գրավոր տեսքով, այնուամենայնիվ, հարցադրումները ԲԷՑ-ում քննվել են և բավարարվել:

Մնացած 9 հարցադրումները վերաբերել են ՎԳՊ դրոյթներին և իրականացման ընթացակարգերին:

Ներքին մոնիտորինգի հաշվետվություններում ամփոփված են 64 գրավոր բողոքներից միայն 31-ը և 17 հարցադրումներից 10-ը (բովանդակության և պատասխաններին ծանոթանալու համար, տե՛ս Հավելված Դ): Հետևաբար, Ներքին մոնիտորինգի հաշվետվությունները ոչ բավարար մակարդակով են ներկայացնում բողոքների առկայությունը դաշտում և դրանց ընթացքը:

Հիմնական բացահայտումներ

Բողոքարկման մեխանիզմները և Բողոքների կարգավորման հանձնաժողովը ձևավորված են: ԱԵԱ-ները հանրային քննարկումների ընթացքում տեղեկացվել են բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ: Մինչույն ժամանակ, պաշտոնական ծանուցման երկու փուլերում ներկայացվել է այն անձի կոնֆակտային տվյալները, ում ԱԵԱ-ները կարող են դիմել մտահոգիչ հարցերի և բողոքների առկայության դեպքում: Բողոքարկման մեխանիզմների և համապատասխան կոնֆակտային անձի վերաբերյալ տեղեկատվությունը նաև հասանելի է ծրագրի բուկլետներում:

Ներքին մոնիտորինգի հաշվետվություններում բողոքների արձանագրման գործընթացքում առկա են թերացումներ: ՏՀՀ-ին հասանալի չեն եղել առկա 61 գրավոր բողոքներին ԲԷՑ-ի կողմից տրված պատասխանները: Գրավոր բողոքներին պատասխանման ընթացակարգում խախտվել են ժամկետները:

Վճարումների գործընթաց

Փոխհատուցման վճարումը նախատեսված է, որ պետք է կատարվի առքուվաճառքի պայմանագրերի և լրացուցիչ փոխհատուցման համաձայնագրերի ստորագրումից հետո 15 օրվա ժամկետում: Գումարը պետք է փոխանցվի ԱԵԱ-ների բանկային հաշվին: Ընդ որում, ՎԳՊ-ի դրույթների համաձայն, եթե ԱԵԱ-ն չունի բանկային հաշիվ, ապա Ծրագրի շրջանակներում նրա համար պետք է բացվի բանկային հաշիվ:

Փաստացի փոխհատուցման վճարումն իրականացվել է ԱԵԱ բանկային հաշիվներին ուղղակի փոխանցման կամ Հատուկ միասնական բանկային հաշվին փոխանցման միջոցով:

Արտաքին մոնիտորինգի արդյունքում պարզվել է, որ այն դեպքերում, երբ տեղի է ունեցել փոխհատուցում, վճարումների գործընթացում առկա են ՎԳՊ դրույթներից շեղումներ: Մասնավորապես, 27 հողակտորների դեպքում փոխհատուցումը վճարվել է առքուվաճառքի պայմանագրի ստորագրումից առաջ, իսկ 58 հողակտորների դեպքում փոխհատուցումը չի վճարվել առքուվաճառքի պայմանագրի ստորագրումից հետո 15 օրվա ընթացքում (տե՛ս Հավելված Դ):

Հիմնական բացահայտումներ

Վճարումների իրականացման գործընթացում տեղի են ունեցել ՎԳՊ դրույթներից շեղումներ՝ սահմանված ժամկետների ապահովման առումով:

Հարկադիր օտարում և ձեռնարկված միջոցներ

Այն դեպքերում, երբ սեփականատերը հրաժարվում է պայմանագիրը ստորագրելուց, սկսվում է հարկադիր օտարման գործընթացը: Հարկադիր օտարումները պետք է կիրառվեն միայն բացառիկ դեպքերում, երբ ԱԵԱ-ի և ԲԷՑ-ի միջև բանակցությունները ձախողվել են: ԲԷՑ-ը պետք է նախաձեռնի օրենքով սահմանված պատշաճ դատական գործընթաց: ՎԳՊ-ն չի կարող համարվել արդյունավետ ավարտված, քանի դեռ չկա դատարանի որոշումը և դրա վերաբերյալ ազդակիր անձինք պատշաճ կերպով տեղեկացված չեն և ԲԷՑ-ը չի կատարել փոխհատուցման, վերականգնման գումարների փոխանցում դատարանի դեպոզիտային հաշվին:

Ծրագրի անվտանգության գոտում առկա են հարկադիր օտարման 2 դեպքեր: Դեպքերից երկուսում էլ սեփականատերերը հրաժարվել են ստորագրել պայմանագիրը՝ պահանջելով օտարել նաև հողակտորի ազդեցության չենթարկված հատվածը: Գործերը ներկայացվել են Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան (2 հողակտոր, Վերին Գետաշեն համայնք, լու-կողեր՝ 05-087-0202-0211 և 05-087-0202-0239, տե՛ս նաև «Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ» բաժինը):

Նշված հողերի ազդեցության ենթարկված հատվածների դիմաց փոխհատուցման գումարները ՎԳՊ դրույթներին համապատասխան ԲԷՑ-ը փոխանցել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտային հաշվին:

Արտաքին մոնիտորինգը այս երկու հողակտորների մասով ՎԳՊ-ն գնահատում է **պայմանականորեն** իրականացված, քանի դեռ չի ընդունվել դատարանի վերջնական որոշումը:

Ընդհանուր առմամբ, Արտաքին մոնիտորինգը գտնում է, որ համաձայն ՀՀ օրենսդրության⁹ հողերի մնացած մասը օտարելու սեփականատերերի պահանջը պետք է բավարարվեր: Սակայն քանի որ վիճարկվում է նաև ժամկետների/ընթացակարգերի խախտումներին վերաբերող հարցեր, ուստի հարցի լուծումը կտրվի Դատարանի կողմից:

Հիմնական բացահայտումներ

Անվտանգության գոտում առկա են հարկադիր օտարման 2 դեպքեր: Երկու դեպքում էլ ԲԷՑ-ը չի համաձայնվել սեփականատերերի հետ՝ օտարել ազդեցության ենթարկված հողակտորն ամբողջությամբ (ներառյալ ազդեցության չենթարկված մասը): Արտաքին մոնիտորինգն այս մասով ՎԳՊ իրականացումը համարում է պայմանականորեն իրականացված՝ վերջնական իրականացումը կախված կլինի դատարանի որոշումից:

⁹ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի Հոդված 5, կետ 2

V. Ազդեցության իրական շրջանակի որոշումը

Համաձայն անվտանգության գոտու հաստատված ՎԳՊ-ի՝ Ծրագիրը պետք է ազդեր 10 գյուղական համայնքների 150,121մ² տարածքով թվով 189 հողակտորների վրա: Դրանցից 168 հողակտորները մասնավոր սեփականություն են, իսկ 21-ը՝ առանց իրավունքի պետական գրանցման հողակտորներ (տե՛ս աղյուսակ 3): Արտաքին մոնիտորինգի ուսումնասիրության առարկա են հանդիսանում բոլոր հողակտորները՝ մասնավոր և առանց իրավունքի պետական գրանցման: Այսպիսով, ՎԳՊ-ով պլանավորվել էր 133,450մ² ազդեցության ենթակա ընդհանուր մակերեսով 168 մասնավոր և 16,671մ² մակերեսով 21 չգրանցված հողակտորների վրա ազդեցություն, որի արդյունքում առկա էին ազդեցության ենթակա 198 տնային տնտեսություններ: Բոլոր մասնավոր և առանց իրավունքի պետական գրանցման հողակտորները օգտագործվել են գյուղատնտեսական նպատակներով՝ չնայած հանդիսացել են բնակավայրային նշանակության հողակտորներ:

Աղյուսակ 3. Անվտանգության գոտում հողերի վրա ազդեցությունն ըստ հաստատված ՎԳՊ-ի

Համայնքներ	Մասնավոր		Չգրանցված		Ընդամենը	
	Հող (N)	Մակերես (մ ²)	Հող (N)	Մակերես (մ ²)	Հող (N)	Մակերես (մ ²)
Ձորագյուղ	48	41,275	1	275	49	41,550
Ծակքար	19	14,533	0	0	19	14,533
Լիճք	5	6,854	2	4,819	7	11,673
Վ. Գետաշեն	39	30,889	4	2,941	43	33,830
Աղնջաձոր	2	2,541	0	0	2	2,541
Գորայք	1	194	0	0	1	194
Ծղուկ	16	8,214	2	1,265	18	9,479
Սպանդարյան	20	18,169	4	2,172	24	20,341
Անգեղակոթ	11	7,089	8	5,199	19	12,288
Գետափ	7	3,692	0	0	7	3,692
Ընդամենը	168	133,450	21	16,671	189	150,121

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ

Իրականացման փուլում տեղի են ունեցել պլանային ցուցանիշների փոփոխություններ.

- Ծրագրի ազդակիր հողի ընդհանուր մակերեսն ավելացել է 17,453մ²-ով՝ պայմանավորված հետևյալով.
 - Բավարարելով 8 համայնքների 64 հողակտորների սեփականատերերի պահանջը՝ օտարվել է տնտեսական և գործառնական նշանակությունը կորցրած հողի մնացած հատվածը, որը հանգեցրել է օտարման ենթակա մակերեսի 16,650մ²-ով ավելացմանը (տե՛ս «Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ» բաժինը):
 - Բավարարելով 1 հողակտորի սեփականատիրոջ պահանջը՝ հողակտորի ազդեցության ենթակա հատվածը չի օտարվել և փոխվել է ամբողջ հողակտորի նպատակային նշանակությունը: Վերջինիս հետևանքով ազդեցության ենթակա ընդհանուր մակերեսն ավելացել է 843մ²-ով (տե՛ս «Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ» բաժինը):
 - 4 համայնքների 11 հողակտորների դեպքում առկա է եղել անհամապատասխանություն սեփականության վկայականների և չափագրման տվյալների միջև: Օտարումն իրականացվել է հիմք ընդունելով սեփականության

վկայականների տվյալները: Արդյունքում օտարման ենթակա հողի մակերեսը կրճատվել է 40մ²-ով:

- Սեփականության իրավունքի պետական գրանցման արդյունքում 21 հողակտորներ, որոնք ՎԳՊ-ում նշված են որպես սեփականության պետական գրանցում չունեցող, վերաձևակերպվել են որպես մասնավոր հողակտորներ (Անգեղակոթ՝ 8, Սպանդարյան՝ 4, Վերին Գետաշեն՝ 4, Լիճք՝ 2, Ծղուկ՝ 2 և Ձորագյուղ՝ 1 հողակտորներ): Արդյունքում մասնավոր հողակտորների օտարման մակերեսն ավելացել է 16,671մ²-ով:

Այսպիսով, անվտանգության գոտում Ծրագիրն ազդել է 167,574մ² ընդհանուր մակերեսով 189 մասնավոր հողակտորների վրա, որի արդյունքում առկա են 198 ԱՏՏ-ներ: Հողերի վրա ազդեցության իրական պատկերը ներկայացվում է աղյուսակ 4-ում:

Բոլոր հողակտորները բնակավայրային նշանակության հողակտորներ են և ենթակա են փոխհատուցման հաստատված ՎԳՊ դրույթներին համապատասխան:

Աղյուսակ 4. Անվտանգության գոտում Ծրագրի ազդեցության իրական պատկերը հողերի վրա

Ցուցանիշը. Հողի մշտական կորուստ	a. Օտարման ենթակա (այլան)		b. Իրականացման արդյունքներ		Տարբերություն (b-a)	
	Հող (N)	Մակերես (մ ²)	Հող (N)	Մակերես (մ ²)	Հող (N)	Մակերես (մ ²)
Մասնավոր հող	168	133,450	189	167,574	21	34,124
Առանց պետ. գրանցման հող	21	16,671	0	0	-21	-16,671
Ձորագյուղ	49	41,550	49	45,194	0	3,644
Ծակքար	19	14,533	19	16,545	0	2,012
Լիճք	7	11,673	7	12,147	0	474
Վ. Գետաշեն	43	33,830	43	39,526	0	5,696
Աղնջաձոր	2	2,541	2	2,541	0	0
Գորայք	1	194	1	320	0	126
Ծղուկ	18	9,479	18	11,033	0	1,554
Սպանդարյան	24	20,341	24	22,007	0	1,666
Անգեղակոթ	19	12,288	19	13,726	0	1,438
Գետափ	7	3,692	7	4,535	0	843
Ընդամենը	189	150,121	189	167,574	0	17,453

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ և ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Հաստատված ՎԳՊ-ով մշակաբույսերի կորստի դիմաց փոխհատուցման ենթակա էր 37,768մ² ընդհանուր մակերեսով 48 հողակտոր¹⁰: Իրականացման փուլում մշակաբույսերի կորստի դիմաց փոխհատուցման ենթակա հողակտորների թիվն ավելացել է 1-ով, իսկ ընդհանուր մակերեսը՝ 6,669մ²-ով: Ցուցանիշների փոփոխությունները պայմանավորված են հետևյալով՝

- 1 հողակտորի ազդեցության ենթակա մշակաբույսը (առվույտ) ՎԳՊ-ում չի ներառվել, թեև ըստ նկարագրության արձանագրության և գնահատման հաշվետվության առկա է եղել: Իրականացման փուլում մշակաբույսի առկայությունը հաստատվել է: Հետևաբար մշակաբույսերի կորստի համար փոխհատուցման ենթակա հողակտորների թիվն ավելացել է 1-ով, իսկ ընդհանուր մակերեսը՝ 1200մ²-ով (Վերին Գետաշեն համայնք, լուս-կող 05-087-0202-0242):
- Իրականացման փուլում 18 հողակտորների սեփականատերեր ցանկություն են հայտնել օտարել տնտեսական և գործառնական նշանակությունը կորցրած հողի մնացած հատվածը (տե՛ս «Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ» բաժինը): Դրա արդյունքում մշակաբույսերի

¹⁰ ԲԷՏ-ի կողմից տրամադրված տվյալների բազայում և ՎԳՊ-ում մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը ներկայացված է ըստ ազդեցության ենթակա հողակտորների, արդյունքում ըստ ՏՏ-ների մոնիտորինգի իրականացումը հնարավոր չէ:

համար փոխհատուցման ենթակա ընդհանուր մակերեսն աճել է 5,478մ²-ով (ցորեն՝ 1,820մ², գարի՝ 1,606մ², առվույտ՝ 1,417մ², կարտոֆիլ՝ 635մ²):

- 2 հողակտորների դեպքում առկա է եղել անհամապատասխանություն սեփականության վկայականների և չափագրման տվյալների միջև: Օտարումն իրականացվել է հիմք ընդունելով սեփականության վկայականների տվյալները: Արդյունքում մշակաբույսերի համար փոխհատուցման ենթակա ընդհանուր մակերեսը կրճատվել է 9մ²-ով (գարի՝ 6մ², ցորեն՝ 3մ²):

Այսպիսով, անվտանգության գոտում մշակաբույսերի կորստի համար փոխհատուցման ենթակա են 44,437մ² ընդհանուր մակերեսով 49 հողակտոր՝ ՎԳՊ դրույթներին համապատասխան:

Աղյուսակ 5. Ազդեցությունը մշակաբույսերի վրա անվտանգության գոտում

Ցուցանիշը. Ազդեցության ենթակա մշակաբույսեր	a. Օտարման ենթակա (պլան)		b. Իրականացման արդյունքներ		Տարբերություն (b-a)	
	Հող (N)	Մակերես (մ ²)	Հող (N)	Մակերես (մ ²)	Հող (N)	Մակերես (մ ²)
Ձորագյուղ	14	13,703	14	14,763	0	1,060
Ծակքար	14	11,562	14	13,414	0	1,852
Վ. Գետաշեն	12	8,020	13	11,374	1	3,354
Ծղուկ	1	460	1	527	0	67
Սպանդարյան	2	1,594	2	1,594	0	0
Անգեղակոթ	5	2,429	5	2,765	0	336
Ցորեն	20	21,188	20	23,005	0	1,817
Գարի	11	6,568	11	8,168	0	1,600
Կարտոֆիլ	9	4,997	9	5,632	0	635
Առվույտ	5	3,442	6	6,059	1	2,617
Կորնզան	3	1,573	3	1,573	0	0
Մշակաբույսեր	48	37,768	49	44,437	0	6,669

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ և ՏՀՀ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Ծառերի կորստի համար փոխհատուցման ենթակա էր 2 հողակտոր (Գետափ համայնք, լոտ-կողեր՝ 10-014-0092-0002 և 10-014-0092-0006): Իրականացման փուլում նշված հողակտորների ԱԵԱ-ները ցանկություն են հայտնել չօտարել հողակտորները, այլ փոխել հողակտորների նպատակային նշանակությունը (տե՛ս «Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ» բաժինը): Այսպիսով, անվտանգության գոտում ծառերի կորստի համար փոխհատուցման ենթակա հողակտորներ առկա չեն:

Աղյուսակ 6. Ազդեցությունը ծառերի վրա անվտանգության գոտում

Ցուցանիշը. Ազդեցության ենթակա ծառեր	a. Օտարման ենթակա (պլան)		b. Իրականացման արդյունքներ		Տարբերություն (b-a)	
	Հող (N)	Քանակ (N)	Հող (N)	Քանակ (N)	Հող (N)	Քանակ (N)
Խաղող	2	223	0	0	-2	-223

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ և ՏՀՀ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Համաձայն ՎԳՊ-ի՝ սոցիալապես խոցելի ԱՏՏ-ները 52-ն էին: Իրականացման փուլում խոցելի ԱՏՏ-ների թիվը կազմել է 54 ԱՏՏ: Փոփոխությունը պայմանավորված է հետևյալով.

- Իրականացման փուլում, ԲԷՏ-ի կողմից իրականացված լրացուցիչ մշտադիտարման արդյունքում, ՎԳՊ-ով խոցելի դիտարկված 2 «աղքատ» ԱՏՏ-ների խոցելիության կարգավիճակը չեղարկվել է (Վերին Գետաշեն համայնք, լոտ-կող՝ 05-087-0202-0225 և Սպանդարյան համայնք, լոտ կող՝ 09-084-0003-0016): Միաժամանակ, հաստատվել է 4 ԱՏՏ-ների սոցիալապես խոցելի լինելու կարգավիճակը՝ «Աղքատ ԱՏՏ» (Վերին Գետաշեն

համայնք, լոտ-կողեր՝ 05-087-0202-0211, 05-087-0207-0010, 05-087-0206-0003 և Սպանդարյան համայնք, լոտ կող՝ 09-084-0003-0050): Արդյունքում «աղքատ» ԱՏՏ-ների թիվը ավելացել է 2-ով:

Նաև ճշգրտվել է 4 ԱՏՏ-ների խոցելիության կարգավիճակը՝ «աղքատ» ԱՏՏ «կին գլխավորով» ԱՏՏ փոխարեն (Գետափ համայնք, լոտ-կող՝ 10-014-0092-0005), «տարեց գլխավորով» ԱՏՏ «աղքատ» ԱՏՏ փոխարեն (Անգեղակոթ համայնք, լոտ-կող՝ 09-013-0100-0031), «տարեց գլխավորով» ԱՏՏ «Կին գլխավորով» ԱՏՏ փոխարեն (Գետափ համայնք, լոտ-կող՝ 10-014-0092-0007) և «կին գլխավորով» ԱՏՏ «տարեց գլխավորով» ԱՏՏ փոխարեն (Սպանդարյան համայնք, լոտ-կող՝ 09-084-0003-0006):

Արդյունքում, բոլոր 54 ԱՏՏ-ներ ենթակա են փոխհատուցման սոցիալապես խոցելի լինելու համար՝ ՎԳՊ դրույթներին համապատասխան:

Աղյուսակ 7. Սոցիալապես խոցելի ԱՏՏ-ները անվտանգության գոտում

Ցուցանիշը. խոցելիություն	Աղքատ ԱՏՏ	Կին գլխավորով	Տարեց գլխավորով	Ընդամենը խոցելի ԱՏՏ-ներ
a. Օտարման ենթակա պլան	45	3	4	52
b. Իրականացման արդյունքներ	47	2	5	54
Տարբերություն (b-a)	2	-1	1	2

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ և ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Համաձայն ՎԳՊ-ի՝ խիստ ազդեցության ենթարկվել են 47 ԱՏՏ-ներ (տե՛ս աղյուսակ 89): Իրականացման փուլում խիստ ազդեցության ենթակա ԱՏՏ-ների թիվը կրճատվել է 2-ով, իսկ հողակտորների թիվը՝ 1-ով: Փոփոխությունը պայմանավորված է հետևյալով.

- Իրականացման փուլում 3 ԱՏՏ, որոնք հանդիսանում են միաժամանակ 2 հողակտորների սեփականատերեր (Գետափ համայնք, լոտ-կողեր՝ 10-014-0092-0002 և 10-014-0092-0006), ցանկություն են հայտնել չօտարել հողակտորները, այլ փոխել հողակտորների նպատակային նշանակությունը (տե՛ս «Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ» բաժինը): Հետևաբար, նշված 3 ԱՏՏ-ները այլևս չեն հանդիսանում խիստ ազդեցության ենթակա ԱՏՏ-ներ: Արդյունքում, խիստ ազդեցության ենթակա ԱՏՏ-ների թիվը կրճատվել է 3-ով, իսկ հողակտորների թիվը՝ 2-ով:
- 1 հողակտորի ազդեցության ենթակա մշակաբույսը (առվույտ) ՎԳՊ-ում չի ներառվել, թեև ըստ նկարագրության արձանագրության և գնահատման հաշվետվության առկա է եղել: Իրականացման փուլում մշակաբույսի առկայությունը հաստատվել է: Հաշվի առնելով, որ ազդեցության է ենթարկվել ամբողջ հողակտորը՝ ԱՏՏ-ն ստացել է խիստ ազդեցության ենթակա ԱՏՏ-ի կարգավիճակ (Վերին Գետաշեն համայնք, լոտ-կող՝ 05-087-0202-0242): Արդյունքում, խիստ ազդեցության ենթակա ԱՏՏ-ների, Ա՛ հողակտորների թիվն ավելացել է 1-ով:

Այսպիսով, անվտանգության գոտում Ծրագրի խիստ ազդեցության համար փոխհատուցման ենթակա են 45 հողակտորների 45 ԱՏՏ-ներ՝ ՎԳՊ դրույթներին համապատասխան:

Աղյուսակ 8. Ծրագրի խիստ ազդեցությունը անվտանգության գոտում

Ցուցանիշը. Ծրագրի խիստ ազդեցություն	a. Օտարման ենթակա (պլան)			b. Իրականացման արդյունքներ			Տարբերություն (b-a)		
	Հող (N)	Մակերես (մ²)	ԱՏՏ (N)	Հող (N)	Մակերես (մ²)	ԱՏՏ (N)	Հող (N)	Մակերես (մ²)	ԱՏՏ (N)
Ձորագյուղ	14	13,703	14	14	14,763	14	0	1,060	0
Ծակքար	12	11,474	12	12	13,326	12	0	1,852	0
Վ. Գետաշեն	10	7,870	10	11	11,224	11	1	3,354	1
Ծղուկ	1	460	1	1	527	1	0	67	0
Սպանդարյան	2	1,594	2	2	1,594	2	0	0	0
Անգեղակոթ	5	2,429	5	5	2,765	5	0	336	0
Գետափ	2	807	3	0	0	0	-2	-807	-3
Ընդամենը	46	38,337	47	45	44,199	45	-1	5,862	-2

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ և ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Հիմնական բացահայտումներ

Անվտանգության գոտում Ծրագրի ազդեցության են ենթակա 10 համայնքների 189 մասնավոր հողակտորներ: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները 198-ն են, որոնցից 54-ը խոցելի են և 45-ը խիստ ազդեցության ենթակա:

Շենքերի, շինությունների օտարման, բիզնեսի և զբաղվածության կորստի, ծառերի կորստի, ինչպես նաև ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր չկան:

Նկարագրված ազդեցության շրջանակին համապատասխան ԱՏՏ-ները ենթակա են ՎԳՊ դրոյթներին համապատասխան փոխհատուցման, որի համապատասխանությունը քննվում է բաժին 6-ում:

VI. Փոխհատուցման համապատասխանության գնահատումը

Փոխհատուցումը հողի մշտական կորստի դիմաց

ՎԳՊ-ի համաձայն՝ անվտանգության գոտու բնակավայրային նշանակություն ունեցող հողերը ԱԵԱ-ների ընտրությամբ կարող են օտարվել կամ կարող է փոխվել հողի (ամբողջական) նպատակային նշանակությունը բնակավայրայինից գյուղատնտեսականի: Հողերի օտարման դիմաց փոխհատուցումը կարող է կատարվել.

(1) որպես դրամական փոխհատուցում, որը հաշվարկվում է հողի շուկայական կամ կադաստրային արժեքներից առավել բարձրին գումարելով դրա 15 տոկոսը,

(2) հողի շուկայի բացակայության դեպքում որպես դրամական փոխհատուցում, որը հաշվարկվում է նույն համայնքում ԱԵԱ-ի համար ընդունելի հողակտորի արժեքին գումարելով դրա 15 տոկոսը,

(3) նույն համայնքում տրամադրելով ԱԵԱ-ի համար ընդունելի հողակտոր, որն իր արժեքով, արտադրողականությամբ համարժեք է ազդեցության ենթակա հողակտորին:

Հողի (ամբողջական) նպատակային նշանակությունը բնակավայրայինից գյուղատնտեսականի փոփոխման դեպքում փոխհատուցումը դրամական արտահայտությամբ համարժեք է հողի արժեքի մասնիկին:

Փոխհատուցման միավոր դրույքաչափերը գնահատվել են հավատարմագրված անկախ գնահատողի կողմից՝ հիմնվելով ՀԲ համար ընդունելի մեթոդաբանության վրա:

Ազդեցության ենթարկա 189 (167,574մ²) հողակտորներից փաստացի օտարվել է 184-ը (163,889մ²) և փոխվել է 3 (3,250մ²) հողակտորների նպատակային նշանակությունը՝ բնակավայրայինից գյուղատնտեսականի: 435մ² մակերեսով 2 հողակտորի օտարման և դրա դիմաց փոխհատուցման գործընթացը կարգավորվում է դատական կարգով (հարկադիր օտարում), քանի որ ԱԵԱ-ները հրաժարվել են ստորագրել պայմանագիրը՝ պահանջելով օտարել նաև հողակտորի ազդեցության չենթարկված հատվածը: ԲԷՑ-ը, սահմանված կարգով, նշված հողակտորների դիմաց փոխհատուցման ենթակա գումարը փոխանցել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտային հաշվին (Վերին Գետաշեն համայնք, լուտ-կոդ 05-087-0202-0211, 666,890 դրամ և լուտ-կոդ 05-087-0202-0239, 399,643 դրամ):

Փոխհատուցված 187 հողակտորներից 171-ի փոխհատուցման հաշվարկը համապատասխանել է ՎԳՊ դրույթներին, իսկ 16 հողակտորինը՝ ոչ: 6 հողակտորների դեպքում ԲԷՑ-ը իրականացրել է արտաքին մոնիտորինգի առաջարկված համապատասխան ճշգրտող միջոցառումները (տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Հողի դիմաց փոխհատուցման ճշգրտման պահանջն անվտանգության գոտում

Ցուցանիշը. Ճշգրտման պահանջ Հողի մշտական կորուստ	Հողակտոր (N)	Փոխհատուցում (դրամ)
Ճշգրտման պահանջը	6	396,029
Ձորագյուղ 05-060-0449-0002	1	355,511
Ծղուկ 10-007-0101-0029	1	24,046
Անգեղակոթ 09-013-0100-0005	1	7,073
09-013-0001-0011	1	3,740
09-013-0001-0013	1	1,414
Սպանդարյան 09-084-0003-0004	1	4,244

Աղբյուրը՝ ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

10 հողակտորների դեպքում, թեև փոխհատուցման հաշվարկը չի համապատասխանում ՎԳՊ դրույթներին, ԱՄԳ-ն ճշգրտող միջոցառումներ չի առաջարկել: Բոլոր հողակտորների դեպքում առկա է եղել անհամապատասխանություն սեփականության վկայականների և չափագրման տվյալների միջև: Օտարումն իրականացվել է հիմք ընդունելով սեփականության վկայականների տվյալները, սակայն փոխհատուցումն իրականացվել է ըստ չափագրման տվյալների: Հաշվի առնելով, որ վճարումներն իրականացվել են ի օգուտ ԱԵԱ-ների (տե՛ս աղյուսակ 10), փոխհատուցման չափերի շեղումները բավականաչափ փոքր են և հետևաբար կոռուպցիոն ռիսկեր չեն կարող պարունակել, ԱՄԳ-ն գտնում է, որ այս մասով ճշգրտող միջոցառումների անհրաժեշտություն չկա:

Աղյուսակ 10. Հողի դիմաց փոխհատուցման անհամապատասխանությունը ՎԳՊ դրույթներին անվտանգության գոտում

Համայնք	Կադաստրային ծածկագիր	Փոխհատուցման շեղում ՎԳՊ դրույթներից (դրամ)
Ձորագյուղ	05-060-0052-0015	9,807
Ձորագյուղ	05-060-0052-0016	9,807
Ձորագյուղ	05-060-0199-0015	19,614
Ձորագյուղ	05-060-0441-0002	2,452
Ձորագյուղ	05-060-0442-0008	9,807
Ձորագյուղ	05-060-0442-0014	14,711
Ձորագյուղ	05-060-0448-0005	7,355
Գորայք	09-028-0002-0011	4,244
Ծղուկ	09-049-0001-0018	33,948
Ծղուկ	09-049-0001-0027	1,414
Ընդամենը		113,159

Աղբյուրը՝ ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Հիմնական բացահայտումներ

Փոխհատուցման ենթակա 187 հողակտորների դիմաց փոխհատուցման գործընթացն ավարտվել է: 2 հողակտորների դիմաց փոխհատուցման գումարն ուղարկվել է դատարանի դեպոզիտ հաշվին: 187 հողակտորներից 177-ի դեպքում հողի մշտական կորստի դիմաց փոխհատուցման հաշվարկը և վճարումը համապատասխանում են ՎԳՊ դրույթներին: Մնացած 10 հողակտորների դեպքում փոխհատուցման հաշվարկը և վճարումը չնայած շեղված է ՎԳՊ դրույթներից, սակայն շեղումները փոքր են, ի օգուտ ԱԵԱ-ների են և ԱՄԳ-ն ճշգրտումների անհրաժեշտություն չի տեսնում:

Փոխհատուցումը մշակաբույսերի դիմաց

Մշակաբույսերի դիմաց դրամական փոխհատուցումը հաշվարկվել է բերքի 1 տարվա զուտ շուկայական արժեքին համապատասխան: Միավոր դրույքաչափը որոշվել է հիմք ընդունելով հիմնական մշակաբույսերի բերքատվությունը և գները 2014-ից 2017 թվականների ընթացքում:

ՎԳՊ իրականացման արդյունքներով մշակաբույսերի կորստի համար փոխհատուցման ենթակա են 49 հողակտոր:

Մշակաբույսերի դիմաց 41 հողակտորների ԱՏՏ-ների փոխհատուցումը համապատասխանել է ՎԳՊ դրույթներին: 8 հողակտորների ԱՏՏ-ների փոխհատուցման հաշվարկը չի համապատասխանել ՎԳՊ դրույթներին, որոնց համար ԲԷՑ-ը իրականացրել է ճշգրտող միջոցառումներ (տե՛ս աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Մշակաբույսերի դիմաց փոխհատուցման ճշգրտման պահանջն անվտանգության գոտում

Ցուցանիշը. Ճշգրտման պահանջ Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Հողակտոր N	Փոխհատուցում դրամ
Ճշգրտման պահանջը	8	188,227
Զորագյուղ 05-060-0199-0013	1	112,896
Ծակքար 05-045-0081-0007	1	2,484
Վերին Գետաշեն 05-087-0206-0020	1	24,516
05-087-0202-0174	1	9,856
05-087-0202-0225	1	7,750
05-087-0202-0223	1	6,512
05-087-0202-0220	1	1,298
Ծղուկ 09-049-0001-0022	1	22,915

Աղբյուրը՝ ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Հիմնական բացահայտումներ

Անվտանգության գոտում մշակաբույսերի դիմաց փոխհատուցումն ավարտվել է՝ ՎԳՊ դրույթներին համապատասխան:

Փոխհատուցումը սոցիալապես խոցելի խմբերի համար

Հաստատված ՎԳՊ-ով լրացուցիչ նպաստներ են նախատեսվել խոցելի խմբերին, մասնավորապես, կնոջ կամ տարեցի կողմից ղեկավարվող ԱՏՏ-ների, ինչպես նաև Ընտանեկան նպաստի համակարգում գրանցված ԱՏՏ-ների համար: Նպաստը համարժեք է 6 ամսվա նվազագույն աշխատավարձին (ամսական 50,000 դրամ):

ՎԳՊ իրականացման արդյունքներով անվտանգության գոտում 54 ԱՏՏ-ներ ենթակա են փոխհատուցման սոցիալապես խոցելի լինելու համար: Դրանցից 2 ԱՏՏ-ների փոխհատուցման գործընթացը կարգավորվում է դատական կարգով: Փոխհատուցման գումարը ՎԳՊ դրույթներին համապատասխան ԲԷՑ-ը փոխանցել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտային հաշվին (Վերին Գետաշեն համայնք, լուտ-կողեր՝ 05-087-0202-0211 և 05-087-0202-0239):

Այսպիսով, Սոցիալապես խոցելի լինելու կարգավիճակ ունեցող բոլոր ԱՏՏ-ների փոխհատուցումը համապատասխանել է ԿՎԳՊ դրույթներին:

Հիմնական բացահայտումներ

Անվտանգության գոտում սոցիալապես խոցելի բոլոր 54 ԱՏՏ-ները փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան: Դատարանի դեպոզիտ հաշվին է փոխանցվել 2 ԱՏՏ-ների փոխհատուցման գումարը:

Փոխհատուցումը «խիստ ազդեցության» համար

ՎԳՊ-ով վերականգնողական միջոցառումներ են նախատեսված Ծրագրի խիստ կամ զգալի ազդեցության դեպքում: Գյուղատնտեսական հողի 10 և ավելի տոկոսը կորցրած ԱՏՏ-ներին տրամադրվում է դրամական աջակցություն գյուղատնտեսական եկամտի կորստի համար, որը համարժեք է կորցրած հողի տարեկան բերքի շուկայական արժեքին:

Խիստ ազդեցության ենթարկված 45 ԱՏՏ-ներից 34-ը փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան: Մնացած 11 ԱՏՏ-ների փոխհատուցման հաշվարկը չի համապատասխանել ՎԳՊ դրույթներին: ԲԷՑ-ը իրականացրել է արտաքին մոնիտորինգի առաջարկված ճշգրտող միջոցառումները (տե՛ս աղյուսակ 12):

Աղյուսակ 12. Խիստ ազդեցության դիմաց նպաստների ճշգրտման պահանջն անվտանգության գոտում

Ցուցանիշը. Ճշգրտման պահանջ խիստ ազդեցության նպաստ	Հողակտոր (N)	ԱՏՏ (N)	Փոխհատուցում դրամ
Ճշգրտման պահանջը	11	11	917,794
Ձորագյուղ 05-060-0199-0013	1	1	112,896
Ծակքար 05-045-0081-0007	1	1	2,484
Վերին Գետաշեն 05-087-0206-0020	1	1	24,516
05-087-0202-0174	1	1	9,856
05-087-0202-0225	1	1	7,750
05-087-0202-0223	1	1	6,512
Ծղուկ 09-049-0001-0022	1	1	180,234
Անգեղակոթ 09-013-0100-0007	1	1	162,108
09-013-0002-0007	1	1	143,982
Սպանդարյան 09-084-0003-0013	1	1	219,906
09-084-0003-0016	1	1	47,550

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Հիմնական բացահայտումներ

Անվտանգության գոտում Ծրագրի խիստ ազդեցության ենթարկված բոլոր 45 ԱՏՏ-ները փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան:

VIII. ՎԳՊ իրականացման բյուջեի ամփոփումը

Ստորև ամփոփված են անվտանգության գոտու ՎԳՊ իրականացման պլանային և փաստացի բյուջեները: Քանզի անվտանգության գոտու բնակավայրային նշանակություն ունեցող հողերը ԱԵԱ-ների ընտրությամբ կարող էին օտարվել (Տարբերակ 1) կամ չօտարվել՝ հողի (ամբողջական) նպատակային նշանակությունը բնակավայրայինից գյուղատնտեսականի փոխելու դեպքում (Տարբերակ 2), ՎԳՊ բյուջեն ներկայացվել է 2 տարբերակով:

Արտաքին մոնիտորինգի արդյունքների համաձայն փոխհատուցման փաստացի ծրագիրը կազմել է 383,474,355 դրամ: Պահանջվել է ևս 1,502,050 դրամ՝ անվտանգության գոտում ՎԳՊ-ն ամբողջական իրականացնելու համար: Ճշգրտող միջոցառումների ավարտից հետո՝ ընդհանուր բյուջեն կազմել է 384,976,405 դրամ:

Աղյուսակ 13. ՎԳՊ իրականացման փաստացի բյուջեն անվտանգության գոտում

	Վերանայված ՎԳՊ		Իրականացման պլան	Փաստացի իրականացում	Ճշգրտող միջոցառում	Իրականացման ճշգրտված արդյունքներ
	Տարբերակ 1	Տարբերակ 2				
<i>Հողակտորների քանակ</i>						
Ընդամենը հողակտորներ	189	189	189	189	0	189
Ընդամենը հողատարածք (մ ²)	150,121	150,121	167,574	167,574	0	167,574
<i>Փոխհատուցում, ՀՀ դրամ</i>						
Մասնավոր հող	318,413,203	421,967,575	353,249,297	352,966,427	396,029	353,362,456
Շենքեր և շինություններ	0	0	0	0	0	0
Խոցելիություն	20,700,000	20,700,000	16,200,000	16,200,000	0	16,200,000
Խիստ ազդեցություն	5,021,652	0	3,604,392	2,686,598	917,794	3,604,392
Վարձակալ (հողի դիմաց)	0	0	0	0	0	0
Ապօրինի օգտագործող (հողի դիմաց)	0	0	0	0	0	0
Մշակաբույսեր	3,191,610	0	3,614,100	3,425,873	188,227	3,614,100
Ծառեր	7,359,000	0	0	0	0	0
Բիզնես	0	0	0	0	0	0
Զբաղվածություն	0	0	0	0	0	0
Լիազորագրերի փոխհատուցում ¹¹	0	0	134,457	134,457	0	134,457
Գրանցման ծառայություն	1,039,500	10,206,000	1,185,000	8,061,000	0	8,061,000
Ընդամենը բյուջե	355,724,965	452,873,575	377,987,246	383,474,355	1,502,050	384,976,405

Աղբյուրը՝ Անվտանգության գոտու ՎԳՊ և ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ


¹¹ Ներկայացված է միայն ԲԷՏ-ի կողմից փոխհատուցված լիազորագրերի բյուջեն: Ներառված չեն այն լիազորագրերի փոխհատուցումները, որոնք փոխհատուցվել են արտաքին խորհրդատուների կողմից:

IX. Հանրային գոհունակությունը

Արտաքին մոնիտորինգի ընթացքում, նախօրոք մշակված հարցաթերթի հիման վրա USS-ների 69 տոկոսի հետ իրականացվել են կառուցվածքային հարցազրույցներ, որով ապահովվել է 4.8 տոկոս ընտրանքի սխալ: Ստացված տվյալները համեմատվել են գրասենյակային վերլուծության արդյունքների հետ, առանձին դեպքերում կապ է վերահաստատվել USS-ների, ՏԻՄ ներկայացուցիչների և Իրականացնող միավորի ներկայացուցիչների հետ՝ տվյալների և տեղեկատվության ստուգման և փոխստուգման համար: Հարցազրույցները թույլ են տալիս ընդհանուր պատկերացում կազմել ՎԳՊ գործընթացից USS-ների գոհունակության մասին:

Հետազոտության համաձայն USS-ների 89 տոկոսը տեղյակ է եղել իրենց համայնքում կազմակերպված հանրային քննարկումների և խորհրդատվությունների վերաբերյալ¹²: Տեղյակ բոլոր USS-ները մասնակցել են հանրային քննարկումներին: Արդյունքում, հանրային քննարկումներին մասնակցած USS-ների 94 տոկոսը գործընթացը համարել է «շատ օգտակար», իսկ 6 տոկոսը՝ «ոչ այնքան օգտակար»: USS-ների նման գնահատականները կարող են վկայել հանրային իրազեկման բարձր արդյունավետության և, միաժամանակ, հանրային քննարկումների բարձր օգտակարության մասին:

Գծապատկեր 1. Հանրային քննարկումների, խորհրդատվությունների գնահատականը



Աղբյուրը՝ ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Բոլոր հարցված USS-ները նշել են, որ պաշտոնապես ծանուցվել են փոխհատուցման ծավալների ու սկզբունքների վերաբերյալ և իրենց տրամադրվել են չափագրման և տեղազննման վերաբերյալ փաստաթղթերը (նկարագրության արձանագրություն, քարտեզ և այլն):

Բոլոր հարցված USS-ները նշել են, որ համաձայն են Նկարագրության արձանագրության մեջ նշված հողատարածքների, ինչպես նաև մշակաբույսերի և ծառերի չափագրման և տեղազննման տվյալների

¹² ՏՀՀԿ-ն պարզապես արձանագրել է այն USS-ների քանակը, որոնք տեղեկացված չեն եղել, որևէ այլ գնահատական այս կապակցությամբ չկա: Համաձայն ԲԷՑ-ի մեկնաբանությունների, բոլոր USS-ները նախապես հեռախոսային զանգերի միջոցով տեղեկացվել են հանրային իրազեկման միջոցառումների տեղի և ժամանակի մասին: Ի լրումն՝ ՀՔ իրականացման մասին հայտարարությունը հանդիպումից մեկ շաբաթ առաջ էլեկտրոնային փոստով ուղարկվել է ՏԻՄ-երին, փակցվել է յուրաքանչյուր համայնքի հայտարարությունների ցուցանակում:

հետ:

ՎԳՊ իրականացման տարբեր գործընթացների նկատմամբ ԱՏՏ-ների գոհունակության սուբյեկտիվ գնահատականները բերված են աղյուսակ 14-ում:

ՎԳՊ իրականացումից ԱՏՏ-ների գոհունակության մակարդակը բարձր է: Ծրագրի կառավարման ու կազմակերպման մակարդակից, ինչպես նաև վճարման գործընթացից դժգոհություններ առկա չեն:

Հիմնական դժգոհությունները վերաբերում են հողի արժեքի գնահատմանը (10.4 տոկոս) և փոխհատուցման մեծությանը (8.3 տոկոս): Մշակաբույսերի արժեքի գնահատումից դժգոհ են ԱՏՏ-ների 7.3 տոկոսը, իսկ չափագրման և նկարագրության արձանագրության կազմման գործընթացից՝ 5.2 տոկոսը:

Աղյուսակ 14. ՎԳՊ իրականացման գործընթացներից ԱՏՏ-ների գոհունակությունը

	Լիովին գոհ	Մասամբ գոհ	Ոչ այնքան գոհ	Դժգոհ	Ընդամենը
1) Չափագրման և նկարագրության արձանագրության կազմման գործընթաց	5.2%	52.1%	37.5%	5.2%	100.0%
2) Հողի արժեքի գնահատում	5.2%	46.9%	37.5%	10.4%	100.0%
3) Լրացուցիչ փոխհատուցման չափից (բերք, ծառ, նպաստ)	5.2%	41.7%	45.8%	7.3%	100.0%
4) Փոխհատուցման ընդհանուր չափ	5.2%	58.3%	28.2%	8.3%	100.0%
5) Վճարման գործընթաց	20.8%	53.1%	26.0%	0.0%	100.0%
6) Ծրագրի կառավարման և կազմակերպման մակարդակ	10.4%	58.3%	31.3%	0.0%	100.0%

Աղբյուրը՝ ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Հիմնական բացահայտումներ

Անվտանգության գոտում ՎԳՊ իրականացման գործընթացների նկատմամբ գոհունակության մակարդակը բարձր է:

X. Եզրակացություններ և առաջարկություններ

«Էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագրի «Նորադուր-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» էլեկտրահաղորդման օդային գծի անվտանգության գոտու ՎԳՊ իրականացման արտաքին մոնիտորինգի ընթացքում իրականացվել են մեթոդաբանությամբ նախանշված բոլոր գործողությունները: Ստացված տվյալների և արդյունքների ճշգրտության և վստահելիության աստիճանը բավականաչափ բարձր է և թույլ է տալիս հանգել եզրակացությունների: Մասնավորապես, անվտանգության գոտու ՎԳՊ իրականացման համապատասխանության ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է.

1. Անվտանգության գոտում Ծրագրի ազդեցության են ենթարկվել 10 գյուղական համայնքների 189 բնակավայրային նշանակության մասնավոր հողակտորներ: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները 198-ն են, որոնցից 54-ը խոցելի են և 45-ը խիստ ազդեցության ենթակա:
2. Շենքերի, շինությունների օտարման, բիզնեսի և զբաղվածության կորստի, ծառերի կորստի, ինչպես նաև ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր չկան:
3. 189 ԱՏՏ-ներից 187-ը փաստացի փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան: 2 ԱՏՏ-ներ գտնվում են հարկադիր օտարման գործընթացում, որոնց համար դատարանի դեպոզիտ հաշվին է փոխանցվել ՎԳՊ դրույթներին համապատասխան հաշվարկված փոխհատուցման ենթակա գումարը:
4. Մշակաբույսերի կորստի համար փոխհատուցվել են բոլոր 49 հողակտորների ԱՏՏ-ները:
5. Սոցիալապես խոցելի լինելու համար փաստացի փոխհատուցվել են 54 ԱՏՏ-ներից 52-ը, իսկ 2 ԱՏՏ-ներ գտնվում են հարկադիր օտարման գործընթացում: Վերջիններիս համար դատարանի դեպոզիտ հաշվին է փոխանցվել ՎԳՊ դրույթներին համապատասխան հաշվարկված փոխհատուցման ենթակա գումարը:
6. Ծրագրի խիստ ազդեցության համար փոխհատուցվել են փոխհատուցման ենթակա բոլոր 45 ԱՏՏ-ները:
7. ՎԳՊ իրականացման ինստիտուցիոնալ համակարգը և կառավարումն համապատասխանում են ՎԳՊ դրույթներին: Ծրագրի կառավարման և կազմակերպման մակարդակից հարցված բոլոր ԱՏՏ-ները գոհ են:
8. Հանրային իրազեկման և խորհրդատվության գործընթացները համապատասխանել են նախատեսվածին: ԱՏՏ-ների 89 տոկոսը մասնակցել է հանրային քննարկումներին, որոնց 94 տոկոսը գործընթացը համարել է «շատ օգտակար»:
9. Վճարումների իրականացման գործընթացում ՎԳՊ դրույթներից առկա են էական շեղումներ՝ հիմնականում դրանք կապված են սահմանված ժամկետների ապահովման հետ:
10. Բողոքարկման և բողոքների արձագանքման գործընթացներում ևս բացահայտվել են ընթացակարգային խախտումներ՝ տվյալների և ժամկետների պահպանման առումներով: Արձանագրված խախտումները չեն հանգեցրել ազդեցության փոփոխության կամ փոխհատուցման ծրագրի նպատակների շեղման::

Հաշվի առնելով սրացված արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ անվտանգության գոտում ՎԳՊ իրականացումն ավարտված է և համապատասխանում է սահմանված քաղաքականությանն ու գործառնական ընթացակարգերին: ԱԵԱ-ների գոհունակության մակարդակը ընդունելի է:

Առաջարկություններ և քաղված դասեր

Դասեր քաղելով իրականացման փորձից՝ հետագայի համար առաջարկում ենք.

- Հանրային իրազեկման և խոհրդատվության գործընթացի վրա առավել մեծ ջանքեր ներդնել: Ընդլայնել ՀԿ-ների դերը և Ծրագրի տեղեկատվական գրքույկների տարածումը:
- Տեղեկցվածության և վստահելիության մակարդակը բարձրացնելու և ցանկալի արդյունքների հասնելու համար, Ծրագրի թիմը պետք է առավել արդյունավետ կապ հաստատի ԱԵԱ-ների հետ, իսկ բողոքարկման առկա մեխանիզմները պետք է առավել պատշաճ կերպով գործադրվեն:
- Կատարելագործել ազդեցության գոտու բնութագրիչները ներկայացնող տվյալների բազաների կառուցվածքը՝ դարձնելով դրանք վերլուծության և համադրումների համար առավել հարմար և ամբողջական: Մասնավորապես, տվյալների բազայում ընդգրկել ԱՏՏ-ների թիվն ըստ հողակտորների:
- Ներքին մոնիտորինգի հաշվետվությունների բովանդակությունը ընդլայնել՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով իրականացման գործընթացների մանրամասներին: Հաշվետվություններում անհրաժեշտ է ընդգրկել բողոքների բոլոր դեպքերը՝ առանձնացնելով բողոքների ներկայացման կարգը:
- Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն հատկացնել արտաքին մոնիտորինգի տվյալ և նախորդ զեկույցների բացահայտումներին և ներկայացված առաջարկություններին:

XI. Հավելվածներ

Հավելված Ա. Ազդեցության ենթակա հողերը և փոխհատուցումը

N	Համայնք	Կադաստրային ծածկագիր	Հաշվարկված փոխհատուցում	Վճարված փոխհատուցում	Վճարման ամսաթիվը
1	Ձորագյուղ	05-060-0052-0013	1,116,449	1,116,449	16/05/19 20/05/19
2	Ձորագյուղ	05-060-0052-0014	3,709,699	3,709,699	25/10/16
3	Ձորագյուղ	05-060-0052-0015	4,332,520	4,342,327	28/12/16 10/03/17 07/10/16
4	Ձորագյուղ	05-060-0052-0016	2,133,066	2,142,873	07/10/16
5	Ձորագյուղ	05-060-0052-0017	1,007,690	1,007,690	07/10/16
6	Ձորագյուղ	05-060-0053-0011	966,010	966,010	29/11/16
7	Ձորագյուղ	05-060-0053-0022	586,861	586,861	13/09/16
8	Ձորագյուղ	05-060-0053-0023	3,961,204	3,961,204	29/11/16
9	Ձորագյուղ	05-060-0053-0024	2,355,877	2,355,877	13/09/16 28/12/16 13/10/16
10	Ձորագյուղ	05-060-0053-0026	3,719,014	3,719,014	13/09/16
11	Ձորագյուղ	05-060-0053-0027	1,553,798	1,553,798	13/09/16 13/10/16
12	Ձորագյուղ	05-060-0053-0028	1,440,087	1,440,087	28/12/16 25/10/16
13	Ձորագյուղ	05-060-0053-0029	4,750,650	4,750,650	13/09/16
14	Ձորագյուղ	05-060-0053-0030	590,884	590,884	07/10/16
15	Ձորագյուղ	05-060-0191-0001	2,184,554	2,184,554	07/10/16
16	Ձորագյուղ	05-060-0191-0008	674,245	674,245	29/03/17
17	Ձորագյուղ	05-060-0199-0013	3,539,746	3,313,954	13/09/16 28/12/16 13/10/16
18	Ձորագյուղ	05-060-0199-0014	1,002,202	1,002,202	13/09/16 13/10/16
19	Ձորագյուղ	05-060-0199-0015	1,520,116	1,539,730	07/10/16
20	Ձորագյուղ	05-060-0199-0016	362,865	362,865	15/12/17
21	Ձորագյուղ	05-060-0440-0016	692,288	692,288	07/10/16 28/12/16
22	Ձորագյուղ	05-060-0440-0017	3,499,750	3,499,750	13/09/16 28/12/16
23	Ձորագյուղ	05-060-0441-0002	3,015,714	3,018,166	07/10/16
24	Ձորագյուղ	05-060-0441-0003	3,015,714	3,015,714	25/10/16
25	Ձորագյուղ	05-060-0441-0004	132,397	132,397	07/10/16
26	Ձորագյուղ	05-060-0442-0006	617,854	617,854	13/09/16
27	Ձորագյուղ	05-060-0442-0007	2,487,006	2,487,006	28/12/16 25/10/16
28	Ձորագյուղ	05-060-0442-0008	2,966,678	2,976,485	13/09/16
29	Ձորագյուղ	05-060-0442-0010	2,942,160	2,942,160	29/11/16
30	Ձորագյուղ	05-060-0442-0012	572,150	572,150	07/10/16 28/12/16
31	Ձորագյուղ	05-060-0442-0013	3,067,202	3,067,202	25/10/16
32	Ձորագյուղ	05-060-0442-0014	3,683,484	3,698,195	07/10/16 28/12/16
33	Ձորագյուղ	05-060-0442-0015	3,246,183	3,246,183	13/09/16
34	Ձորագյուղ	05-060-0442-0016	848,323	848,323	13/09/16
35	Ձորագյուղ	05-060-0443-0001	3,977,700	3,977,700	02/11/16 28/12/16

HV-CS-3/2014, «Նորարդուգ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» ՎԳՊ իրականացման համապատասխանության հաշվետվությունների պատրաստում, Անվտանգության գոտի

N	Համայնք	Կադաստրային ծածկագիր	Հաշվարկված փոխհատուցում	Վճարված փոխհատուցում	Վճարման ամսաթիվը
36	Ձորագյուղ	05-060-0443-0002	4,023,074	4,023,074	13/09/16 13/10/16
37	Ձորագյուղ	05-060-0443-0003	3,106,771	3,106,771	13/09/16 13/10/16 28/12/16
38	Ձորագյուղ	05-060-0443-0004	1,103,310	1,103,310	07/10/16
39	Ձորագյուղ	05-060-0443-0010	1,356,726	1,356,726	28/12/16 13/09/16
40	Ձորագյուղ	05-060-0443-0011	4,547,640	4,547,640	25/10/16 28/12/16
41	Ձորագյուղ	05-060-0448-0002	699,329	699,329	28/12/16 13/10/16 07/10/16
42	Ձորագյուղ	05-060-0448-0003	3,883,720	3,883,720	07/10/16 13/10/16 28/12/16
43	Ձորագյուղ	05-060-0448-0004	3,046,162	3,046,162	13/09/16
44	Ձորագյուղ	05-060-0448-0005	3,481,328	3,488,683	13/10/16 07/10/16
45	Ձորագյուղ	05-060-0448-0006	3,560,894	3,560,894	23/02/17 25/10/16
46	Ձորագյուղ	05-060-0448-0007	3,046,162	3,046,162	13/09/16
47	Ձորագյուղ	05-060-0449-0002	3,144,088	2,788,577	28/12/16
48	Ձորագյուղ	05-060-0449-0004	1,871,717	1,871,717	28/12/16 29/11/16
49	Ձորագյուղ	05-060-0438-0003	5,697,122	5,697,122	13/09/16 13/10/16
50	Ծակքար	05-045-0080-0002	1,779,061	1,779,061	15/08/16
51	Ծակքար	05-045-0080-0004	102,574	102,574	15/08/16
52	Ծակքար	05-045-0080-0008	117,773	117,773	15/08/16
53	Ծակքար	05-045-0080-0009	2,942,160	2,942,160	15/08/16
54	Ծակքար	05-045-0080-0010	3,071,760	3,071,760	15/08/16
55	Ծակքար	05-045-0080-0011	3,062,160	3,062,160	15/08/16
56	Ծակքար	05-045-0081-0005	382,770	382,770	15/08/16
57	Ծակքար	05-045-0081-0006	3,071,760	3,071,760	15/08/16
58	Ծակքար	05-045-0081-0007	4,045,005	4,040,037	13/09/16 09/12/16
59	Ծակքար	05-045-0081-0008	742,574	742,574	13/09/16 09/12/16
60	Ծակքար	05-045-0081-0009	3,827,700	3,827,700	13/10/16
61	Ծակքար	05-045-0081-0010	3,496,566	3,496,566	13/09/16
62	Ծակքար	05-045-0081-0011	4,045,005	4,045,005	13/09/16 13/10/16
63	Ծակքար	05-045-0082-0009	985,624	985,624	15/08/16
64	Ծակքար	05-045-0082-0010	3,071,760	3,071,760	15/08/16
65	Ծակքար	05-045-0082-0012	3,071,760	3,071,760	29/11/16
66	Ծակքար	05-045-0082-0014	2,942,160	2,942,160	15/08/16
67	Ծակքար	05-045-0082-0015	370,222	370,222	17/08/16
68	Ծակքար	05-045-0083-0009	436,420	436,420	29/11/16
69	Վ. Գետաշեն	05-087-0202-0199	3,062,160	3,062,160	09/09/16 20/06/17
70	Վ. Գետաշեն	05-087-0202-0191	2,942,160	2,942,160	09/09/16
71	Վ. Գետաշեն	05-087-0202-0239	699,643	699,643	21/06/17 05/03/19
72	Վ. Գետաշեն	05-087-0202-0225	395,529	380,029	20/07/17
73	Վ. Գետաշեն	05-087-0202-0212	2,942,160	2,942,160	29/11/16
74	Վ. Գետաշեն	05-087-0202-0178	3,242,160	3,242,160	09/09/16 11/04/17

HY-CS-3/2014, «Նորարդու-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» ՎԳՊ իրականացման համապատասխանության հաշվետվությունների պատրաստում, Անվտանգության գոտի

N	Համայնք	Կադաստրային ծածկագիր	Հաշվարկված փոխհատուցում	Վճարված փոխհատուցում	Վճարման ամսաթիվը
75	Վ. Գետաշեն	05-087-0202-0177	3,242,160	3,242,160	09/09/16 20/06/17
76	Վ. Գետաշեն	05-087-0202-0251	2,994,960	2,994,960	09/09/16 20/06/17
77	Վ. Գետաշեն	05-087-0202-0245	39,229	39,229	20/07/17
78	Վ. Գետաշեն	05-087-0202-0259	3,052,491	3,052,491	09/09/16
79	Վ. Գետաշեն	05-087-0202-0203	1,229,232	1,229,232	09/09/16 11/04/17
80	Վ. Գետաշեն	05-087-0202-0220	145,954	144,656	20/07/17
81	Վ. Գետաշեն	05-087-0202-0257	2,994,960	2,994,960	09/09/16 20/06/17
82	Վ. Գետաշեն	05-087-0202-0209	2,942,160	2,942,160	09/09/16
83	Վ. Գետաշեն	05-087-0202-0208	279,505	279,505	09/09/16
84	Վ. Գետաշեն	05-087-0202-0211	966,890	966,890	21/06/17
85	Վ. Գետաշեն	05-087-0202-0242	2,994,960	2,994,960	13/10/16 20/06/17
86	Վ. Գետաշեն	05-087-0202-0192	3,242,160	3,242,160	09/09/16 11/04/17
87	Վ. Գետաշեն	05-087-0202-0224	2,942,160	2,942,160	09/09/16
88	Վ. Գետաշեն	05-087-0202-0256	715,096	715,096	29/11/16
89	Վ. Գետաշեն	05-087-0202-0190	226,936	226,936	29/11/16
90	Վ. Գետաշեն	05-087-0202-0197	3,242,160	3,242,160	09/09/16 11/04/17
91	Վ. Գետաշեն	05-087-0202-0170	2,942,160	2,942,160	09/09/16
92	Վ. Գետաշեն	05-087-0202-0169	164,270	164,270	09/09/16
93	Վ. Գետաշեն	05-087-0202-0231	2,942,160	2,942,160	07/10/16
94	Վ. Գետաշեն	05-087-0202-0195	2,942,160	2,942,160	09/12/16
